



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13142

891.99

U-25

891 99

Մ-25

ԱԶԳԱՅԻՆ

ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

(Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ)

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ

Ուսմունք եւ ընկերացմունք

Հայք հարստահարութենէ փրկելու համար, իրենց ճանչցնել տալ պէտք է զիրենք. Հայք անտարբերութեան զերեզմանի ափէն ետ դարձնելու համար՝ իրենց հայրենական բարբառով կանչելու է զիրենք: Մասեաց սրինդները հնչեցնելու է իրենց ականջին:

Սրուանծոտեան:

Յօրինեց

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս

Համբ. Էնֆիաճեանցի և ընկ. Տպարան.

1880

2003

23098

Մ 400423

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(Հայաստանի գրագիտության կենտրոն)

ՍՄՏՈՐՆԵ ԳՐԱԳՐՈՒ

Մատենադարանի գրադարան

Дозволено цензурою Тифлиси 30-го Июля 1880 года.



5639
38



Բացատրութիւններ ուսուցչի համար շուտով կը հրատարակուի:

0882

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Գիւցազնական աշխարհ:

Ա.

Ս. Կարապետը Հայերի համար փառք ու պարծանք է՝ զօրաւոր և հարուստ է: Շատ իշխաններ և աւազակներ նախանձել են Հայերին և ուզեցել են կորզել նոցա ձեռքից Ս. Կարապետը: Որովհետեւ նա ունի շատ հարստութիւն և կալուածք, անտառ ու դաշտ, ոչխար և մալ:

Բաղդադ քաղաքը առաջ շատ շքեղ և մեծ էր, նորա խալիֆան զօրեղ և կտրիճ՝ մարդ էր: Սա զօրք ժողովեց և եկաւ մեր սուրբ Կարապետի վերայ, շատերին գերի տարաւ և մեր ազգը շատ նուազեցրեց:

Գերիների մէջ լինում է մի շատ սիրուն աղջիկ: Բաղդադի խալիֆան հաւանում է նորան և իւրեան կին է առնում: Մէկ ժամանակից յետոյ երկու տղայ է լինում այդ կնոջից. մէկի անունը գնում են Սբամէլեք և միւսին՝ Սանասար: Սոցա հայրը կռապաշտ էր, իսկ մայրը խաչապաշտ, որովհետեւ մայրը մեր ազգիցն էր:

*

Ս.Պ. Խալիֆան մի անգամ էլ զօրք ժողովեց՝ եկաւ մեր ազգի վերայ: Մեր ազգը (մեռնեմ սուրբ Կարապետի հրաշքին)

այս անգամ նորան շատ նեղը լծեց: Այնպէս որ այս մեծ նեղութեան մէջ խալիֆան կանչեց իւրեանց կուռքը և ասաց. «Ո՛վ մեծ կուռք, դու ինձ ազատիր այս ազգից, և երբ ես ողջ վերագառնամ, խոստանում եմ՝ իմ երկու տղայքը քեզ մատաղ անել»:

Նոցա մայրը քնեց, երազ տեսաւ: Տեսաւ որ ինքն երկու ճրագ ունէր, այդ ճրագները իբր թէ մէկ ուզում էին հանդէլ, մէկ էլ դարձեալ սկսում էին լոյս տալ: Առաւօտուն վեր կացաւ և միտք բերելով՝ պատմեց երկու տղայոց երազի եղև կացաւ և միտք բերելով՝ պատմեց երկու տղայոց երազի եղև լուծիւնն և ասաց. «Այս զիշեր երազում Ս. Կարապետն ինձ երևաց, ասաց թէ ձեր հայրն ընկել է նեղութեան մէջ և ձեզ մատաղ է խոստացել իւր կուռքերին: Ուրեմն երբ որ դայ՝ ձեզ պիտի մատաղ անէ: Գնացէք, ձեր ձարը դատէք»:

Երկու եղբայրները կանչեցին իւրեանց Աստուծուն, վեր կացան առան իւրեանց պաշարը, լցրին պարկը և ճանապարհ ընկան: Հսկան ճանապարհ և շատ պոտեցին. տունն դուրս եկան օտար երկիր:

Գնացին հասան մի նեղ ձոր և տեսան, որ մի գետ է գալիս անցնում. միւս կողմից մի առու էր գալիս մտնում այդ գետի մէջ, կտրում էր նորան և ուժով շերտում էր մինչև մէջ տեղը, և ապա խառնվում նորա հետ ու գնում: Սանասարը շատ զարմացաւ այս բանի վերայ և Աբամէլէքին ասաց. «Ո՛վ որ այդ ջրի ակը գտնէ, և իւր տունը այդ ջրի վերայ շինէ, նորան եթէ զաւակ լինի՝ այդպէս ուժեղ կըլինի»:

Վեր կացան երկու եղբարք, առուն բռնեցին ու գնացին: Գնացին և աղբիւրը գտան: Այդ աղբիւրի ջուրը մի մատի հաստութեամբ ջուր է. գալիս է բոլորովին կտրում է իւր տակի առուն, և յետոյ մի անգամ էլ դառնալով՝ խառնվում է նորա մէջ:

Նոր Ստումեն տքա այդ աղբիւրի գլխին և իւրեանց բերդի հիմքը ձգում:

Սանասար որսի էր գնում և Աբամէլէք աշխատում էր բերդի շինութեան վերայ: Այդ տեղի մօտակայքում դեռ ուրիշ բնակութիւն չուկար:

Տան կամ քսան օր բանեցին այդ ամրոցի վերայ: Աշխատանք էր, որ նոքա անդադար կրում էին: Աբամէլէք մի օր գնաց տեսաւ, որ Սանասարը յոգնած պառկել էր և վրան քունն էր եկել: Արիւնտոս որսերը հէնց առանց եփելու թափել էր դետին ու քնել: Շատ կսկծաց նորա դրութեան վերայ և ասաց. «Նոցայր, վեր կաց գնանք մի տէր գտնենք. մինչև երբ պէտք է մենք այս տեղ մնանք և անալի միս ուտենք: Աստուած որ տուել էր, մեզ մեր հօր պալատն ու ամրոցը կուտար»:

Երկուսն էլ հեծան ձիերը և դիմեցին Արզըում՝ նստող իշխանի մօտ: Գնացին այդ իշխանին գլուխ տուեցին: Ահագին ու ուղածիղ պէս ակնածելի մարդիկ են այդ երկու եղբայրները:

Արզըում նստող ամիրան շատ հաւանեց դոցա, հարցրեց նոցա ազգն ու հայրենիք և ասաց. «Գուր ի՞նչ մարդ էք»:

— Մենք Բաղդադի խալիֆի որդիքն ենք, ասաց Սանասար:

«Հայ, հայ, հայ, ասաց ամիրան և դոցա առաջ թափ տուեց իւր փողպատը, մենք դոցա մեռելներից էինք վախենում, հիմի կենդանիներին պատահեցանք: Ուր կ'երթաք՝ գնացէք, մենք չենք կարող ձեզ տէր լինել»:

Այն տեղից յետ դարձան և քչեցին գնացին Ղարսում նստող ամիրայի մօտ. նա էլ այդպէս խորշեցաւ նոցանից: Եւ

նորա այդ տեղից էլ դառնալով մտքները դրին որ այս անգամ
կապուտկողի թագաւորին գնան:

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Նղբայր, մենք այդ հո-
րիցն ենք փախչում, բայց ինչո՞ւ նորա անունն ենք դրել մեր
վերայ. այսուհետեւ ուր որ գնանք, ուր որ հարցնեն, պէտք է
ասենք, թէ մենք բան չունինք՝ ոչ հայր, ոչ մայր, ոչ տուն,
ոչ հայրենիք. գուցէ մարդիկ մեզ էլ տէր դառնան»:

Երբ որ կապուտկողի թագաւորը դոցա տեսաւ, շատ հա-
ւանեց: Աբամէլիքը գլուխ խոնարհեցրեց և կանգնեց նորա ա-
ռաջին. թագաւորը շատ սիրեց նորան, և հարցրեց դոցանից.
«Որդիք, դուք որ տեղից էք, ի՞նչ ունիք, ի՞նչ չունիք»:
— Ո՛հ, ոչինչ չունինք, ասացին, ոչ հայր, ոչ մայր և
ոչինչ:

Վերջապէս Սանասարը կարգուեց չիբուխէի խի Աբա-
մէլիքը խահուէչի: Նւ այսպէս սորա մի ժամանակ մնացին, և
էլի շատ պէտք է մնային, եթէ ուրիշ միտք չունենային իւրեանց
գլխում:

Մի օր Սանասարն ասաց Աբամէլիքին. «Մենք որ այսպէս
ծառայենք, երբ պէտք է հասնենք մեր նպատակին: Այնքան
աշխատեցինք ու մեր շէնքը կիսակատար մնաց: Մեզ տէր է
պէտք, որ ժողովուրդ տայ մեզ և տիրանայ: Առաւօտուն ոչ
դու խահուէ կփիր, ոչ ես չիբուխ պատրաստեմ և տամ: Եւ
չըզնանք իշխանին երեւալու»:

Թագաւորը քնի մէջ իմացաւ: Նւ յետոյ ոչ մէկը երևե-
ցաւ, ոչ միւսը. վերջապէս կանչեց այդ մարդոց, զնաց եկաւ
թագաւորն ու ասաց. «Որդիք, առաջ ես մի՞թէ չը հարցուցի,
թէ ի՞նչ ունիք, հայր մայր, և դուք պատասխանեցիք թէ բան
չունինք: Դուք ձեր միտքը ի՞նչի վերայ էք դրել»:

Պատասխանեցին. «Թագաւորն ասրած կենայ, ճշմարիտ է՝
հայր մայր չունինք, բայց եթէ քեզանից ծածկենք, Աստուց
ի՞նչ ծածկենք: Մի ամայի տեղ շէնք են սկսել, փոքր ինչ վե-
րան աշխատեցինք և թողել էկել, այս տեսակ աղբիւրի վերայ
է՞. ու սկսան պատմել, թէ ի՞նչ տեսակ է»:

Թագաւորի սիրտը զթաց դոցա վերայ և ասաց. «Որդիք,
որովհետեւ այդպէս է, առաւօտը ձեզ մի քանի տուն կուտամ,
և զնացէք ձեր բերդը շինեցէք»: Նւ տուեց դոցա քառասուն
տուն: Բայց ի՞նչ տուն. հէյ... ամէն մէկին մի էլ ամենայն
բարիքով բարձած և մէկ էլ ճախրակ հետը դրեց:

Առաւօտը վեր կացան, ժողովեցին, կապեցին, բարձեցին
իւրեանց տները, և ճանապարհ ընկան, զնացին, իջևանեցան
իւրեանց աղբիւրի և իւրեանց հիման վերայ:

Սանասարն ասաց Աբամէլիքին. «Առաջ այս բերդը շի-
նենք, թէ այս ողորմելի աղքատների բնակարանները»: Աբա-
մէլիքը պատասխանեց. «Առաջ շինենք դոցա բները, ու նոր շի-
նենք մեր բերդը. այդ խեղճերը չեն կարող արեւի տակ կե-
նալ»:

Եւ սկսան շինութիւնները: Աբամէլիք այնքան զօրեղ էր,
որ տասը տան տեղ էր փորում և տասը տուն շինում, այն
միւսն էլ փայտերն էր բերում. և այսպէս բանուածքը երկու-
սով էին շինում: Երկու եղբայրները չորս օրուայ մէջ քառա-
սուն բնակութիւն շինեցին աւարտեցին: Ապա սկսեցին կիսատ
թողած բերդը շինել և վերջացուցին: Այնքան ուժեղ էին, որ
քարէ սեան քարէ սիւն զարկեցին, կամարները քաշեցին և
բերդը աւարտեցին:

Աբամէլիքը վեր կացաւ եկաւ իւր թագաւորի մօտ և
ասաց. «Մենք քո որդիքն ենք, մեր բերդը շինել և աւարտել

ենք. Հիմի եկել ենք քեզ մօտ և խնդրում ենք, որ դաս և մեր բերդին անուն դնես»:

Թագաւորը շատ սիրեց և պատուեց Աբամէլիքին, և ասաց. «Կաւ է, որ ինձ չէք մոռացել»: Եւ ելաւ իւր աղջկը Աբամէլիքին տուեց և որդեգրեց նորան:

Երբ որ աղջկը պսակեցին, ելան թագաւորը, աղջկին ու տղան և նոցա հետ էլ քեռի թորոսը, ձի հեծան և գնացին: Նոցա հետն էլ շատ զօրք ու ժողովուրդ, տարան շատ զարդ ու պարզէներ, և մեծ հազէս պիտի կատարէին: Աբամէլիքը նոցա առաջնորդեց և գնացին հասան բերդի տեղը: Աբամէլիքը զլուխ տուեց թագաւորին և ասաց. «Տէր, քո ոտիդ տակն է բերդը»: Թագաւորը ուրախացաւ, հրամայեց զբոշակները բանալ, զարդարուել, փող փչել, թմբուկ հարկանել, պարզէներ հանել, և մեծ հանդիսով բերդը մանել:

Երբ որ մօտեցան՝ յանկարծ թագաւորն այնպիսի փառաւոր շքեղ բերդ տեսաւ, որ հիացած մնաց: Զարմացաւ, բայց շուտ էլ բարկացաւ և այն տեղից ձիու գլուխը դարձրեց, որ պիտի յետ գնար, և ասաց. «Կուք ձեր բերդին անուն դրել էք, վերջացուցել էք, հիմի դիտամք կանչել էք ինձ, որ փորձէք»:

— «Թագաւորը ապրած կենայ, ասաց Աբամէլիքը, մէկ մենք, մէկ Աստուած գիտէ, որ այդ բերդի անուն չենք դրել. մենք միայն բերդ շինեցինք կանգնեցրինք»:

«Է, ապրիք, լաւ վարպետ ձեռք էք ունեցել: Եւ որովհետեւ անուն չէք դրել, քարէ սեան սիւն էք տուել, հրամայում եմ և զորա անունը պէտք է լինի Սեանսիւն, Սասուն»:

Մէկ ժամանակ մնացին այն տեղ, քեռի թորոսին էլ զլուխ կարգեցին, և նա էլ այն տեղ մնաց. թագաւորը դարձաւ իւր տեղը:

Աբամէլիքը շատ կտրիճ մարդ էր: Մշի վերեւով ինչ սարեր որ պատել զօտի են կազմել՝ այդ ամէնն էլ գրաւեց: Եւ ոչ մէկ կողմը չը թողեց, միշտ ձի կը հեծնէր, իւր բերդի դռնից դուրս կուգար, և որքան ջին ու ջանաւար տեսնէր՝ բռնում էր, տէր էր դառնում:

Մի օր էլ գնաց մինչև Մուսուլ և այն էլ գրաւեց. այն տեղի թագաւորին սպանեց, առաւ նորա կինը, և մի որդի ունեցաւ: Եւ որովհետեւ իւր անունը Աբամէլիք էր, որդու անունը դրեցին Մայամէլիք: Աբամէլիքը նստեց Մուսուլ, եղաւ թագաւոր:

Դա այդ տեղ թող նստած մնաց:

Բ.

Սանասարը նստած էր Սասուն: Իւր հօր կուռքերը չէին թողնում, որ այդ տեղ հանդիստ մնար, և ելաւ ճանապարհ ընկաւ ու գնաց Բաղդադ իւր հօր ու մօր մօտ:

Նորա հայրը լուսամտի առաջ նստած էր, տեսաւ որ իւր որդի Սանասարը գալիս է, ճանաչեց և ասաց. «Է՛յ մեռնեմ քեզ, մեծ կուռք, մեծ է զօրութիւնդ, որ քո մատաղը քաշեցիր բերիւր երբ և իցէ միւսն էլ կը քաշես կը բերես»: Իսկ մայրը, որովհետեւ քրիստոնեայ էր, նստաւ արտասուեց իւր որդոց վերայ:

Հայրն առաւ թուրն ու սուրը և գնաց. կանչեց Սանասարին և ասաց. «Որդի, արի գնանք երկրպագութիւն տուր մեծ կուռքին, որ քեզ մատաղ անեմ»: — Հայրիկ, ասաց տղան, քո մեծ կուռքը շատ մեծ զօրաւոր կուռք է. գիշերն էլ չէր թողնում, որ մենք այն տեղ հանդիստ մնայինք. երբ և իցէ միւս մատաղն էլ կը քաշէ կը բերէ»:

Առաւ տղային և մտաւ կռատուն:

Տղան ասաց Տօրն. «Հայրիկ, զիտես դու, որ երբ մենք գնացինք՝ մենք պատիկ էինք, մենք քո կուռքի զօրութիւնը չը գիտենք. դու խոնարհիր քո կուռքին երկրպագութիւն տուր, տեսնեմ ինչպէս ես անում, որ ես էլ սովորեմ»:

— Այսպէս որդեակի, ասաց Տօրն, և խոնարհեցաւ երկրորդ պագոց:

«Հայրիկ, ասաց տղան, տես քո կուռքն ինչ զօրաւոր էր. երբ որ դու խոնարհեցար՝ իմ աչքերը մթնեցան, չը տեսայ թէ ինչպէս արեցիր»: (Որովհետեւ արխայուխի կոծակները չարձակուեցան՝ այս առաջին անգամ չը հասաւ, որ զարկէ էր): Եւ յետոյ աւելացրեց. «Հայրիկ, Տօրն, մէկ անգամ էլ երկրպագիր տեսնեմ ինչպէս ես անում, որ ես էլ անեմ»:

Եւ երբ որ Տօրը կրկին խոնարհեցաւ, տղան ասաց: «Եան, հացն ու զինի, Տէր կենդանի», և մի դուրզ իջաւ, և իւր հայր խալեֆային եօթն գազ գետինն ի վայր իջեցրեց: Ապա առաւ դուրդը և մտաւ կռքերի մէջ, բոլորն էլ ջարդեց, և առաւ արծաթներն ու լցրեց իւր արխայուխի փէշը, բերեց տուեց մօրը և ասաց. «Մամօ, դոցանից զարդեր շինել տուր քեզ համար»:

Մայրը խոնարհեցաւ, երկրպագութիւն արեց և ասաց. «Գոհանամ քեզանից երկնի և երկրի Ստեղծող, որ մեզ այս բարբարոսի ձեռքից ազատեցիր»:

Եւ բերեց Սանասարին պսակեց և նստացրեց հօր դահի վերայ:

Նա մնաց այն տեղ: Մենք զանք Աբամէլեքին:

Գ.

Աբամէլեքը, որ Մուսուէր նստած, իւր զաւակ Մսլամէլեքին թողեց իւր տեղը, ինքը գնաց Սասուն: Այսպէս անցաւ

մի միջոց մի ժամանակ, դորանից մի քանի որդիք ծնուեցան. մէկի անունը դրեց՝ ճնճղա փոքրիկ, մեծ տղինը՝ Յան վէզի, մէկինը՝ Զէն օվ Ովան, մէկի անունն էլ՝ Խոթր Գուսաան, ու ամենի պատկինն էլ՝ Գաւթ:

Այդ տղերանց մէջ ճնճղաի որդիին ու Յանվէզին ամենեւին բանի պէտք չէին: Իսկ Զէնով Ովանն այնպիսի ձայն ունէր, որ եօթը դուռնի կաշի ձգում էր արեւը չորացնում, նոցա նով փաթաթվում էր, որպէս զի եթէ գոռայ՝ ինքը չը պատուուի և չը տրաքուի:

Խոթր Գուսանը լաւ երգում էր և իւր խաղով աշխարհք էր գրաւում:

Բայց ամենից աւելի հնարաւորն ու շնորհալին Գաւթն էր. նորա ուժը ոչ մէկ լեզուով չի պատմուի:

Այսպէս բաւական ժամանակ մնաց, ծերացաւ Աբամէլեքը, մի օր նստաւ ինքն իրան մտածեց և ասաց. «Չորս կողմը ինձ թշնամի եղաւ. իմ անցմանից յետոյ՝ էլ ո՞վ պիտի տիրութիւն անէ իմ որդոց: Թէ որ անէ՝ միայն Մսլամէլեքը կարող է թէ չէ ուրիշ մարդ չի կարող դէմ դնել իմ թշնամիներին»:

Ճանապարհ ընկաւ և գնաց Մսլամէլեքին: Ծեր ժամանակն էր, ասաց. «Մսլամէլեք որդիս, դու էլ իմ զաւակ ես. եթէ ես շուտ մեռնեմ, իմ որդիքս քեզ պահ կուտամ, եթէ դու շուտ մեռնես, ես խնամեմ քո որդոց և պահպանեմ»: Գարձաւ եկաւ, մնաց իւր բերդը: Մահուան օրն եկաւ, մեռաւ: Մսլամէլեքն եկաւ նորա որդոց տարաւ, ըստորում հօր պատուէրը չէր մոռացել:

Իսկ Սասունը իւր տիրոջ մահուանից յետոյ եօթը տարի սուգ մնաց, ամէն նոր ծնուողին խաղով իմաց կ'անէին Աբամէլեքի մահը, ամեն մեռնողին եթէ հոգեւոյս ասէին՝ Աբամէլեքին էլ հետը կը յիշէին. ոչ հարսանիք ունէին, ոչ ուրախութիւն:

Քեռի թորոսն էր վշտացած ամենից շատ, որ աշխարհը անտէր է մնացել և Աբամէլէքի ժառանգները այսքան ժամանակ զերինների պէս նստած են հեռու իրանից:

Երբ որ գեղացիք շատ սուգ արեցին, մի օր հաւաքուեցան եկան քեռի թորոսի մօտ և ասացին. «Քեռի թորոս, մեր աղերքը այլևորեցան և մեր աղջկերքը պառաւեցան. թէ մեր եօթը տարի սուգ անելով մեր Աբամէլէքը կ'ողջանայ, մի եօթը տարի էլ աւելի պահենք՝ պատրաստ ենք»:

Քեռի թորոսը հրաման տուեց դրկից — հարեաններին և ասաց. «Պատկեցէք ձեր տղաներին ու աղջկներին, սուգ պահելով ոչինչ չի լինի»:

Քեռի թորոսն ու գեղացիք նստան գինեխում սարքեցին ու խրախճացին: Միայն քեռի թորոսն էր անմխիթար: Նա կթխան ձեռն առաւ, մնաց սառած և սկսեց մտածել՝ ոչ խմում է և ոչ վեր է դնում: Թորոսի աղան հեռուից ձայն տուեց և ասաց. «Պապօ, դոքա Սասունի գժեր են. հիմա մի անպատիւ խօսք կ'ասեն քեզ, կամ խմիր, կամ դիր գետին ու գնայ»:

Վեր անաւ հայրն ու տղին ասաց. «Չէ՛յ անպիտան որդի, ես այստեղ նստեմ կերուխում անեմ, Մսլամէլէքը գայ մեր երեսաներին տանի, Աբամէլէքի տղաներին քշէ տանի, ես այստեղ կերուխում անեմ: Ամօթ չէ՞ մեզ. հաց գինի ու Տէր կենդանի, քան այս կթխան աւելի խմած չը լինեմ: Ելնեմ երթամ իմ երեսաներին երևան»:

*

Քեռի թորոսը Սասունից խփեց ու գնաց Մուսուլ, ինքը գլուխ տուեց, Մսլամէլէքը գլուխ տուեց, ու նստան: Թորոսն ասաց. «Ահա ես ու դու՝ դասաստան Աստուծո: Իրաւ է, դու և Աբամէլէք պայմանադիր էք եղել, բայց գերին գին ունի, տիրոջ կը հասնի»:

Գնացին Աստուծո՛ւ զատաստան. երեսաները թորոսին վիճակուեցան:

Մսլամէլէքի աչք շատ էր վախենում այդ տղաներից, ուստի քեռի թորոսին ասաց. «Արի բեր այդ երեսաներին անցկացրու իմ թրի տակով, յետոյ առ ու գնա»:

Քեռի թորոսն եկաւ յայտնեց երեսաներին:

Յանվէզին ասաց. «Գնանք անցնենք նորա թրի տակով և թողնենք երթանք»: Միւս երկուսն էլ նոյնը ասացին: Բայց Գաւթի թր քար կտրուեցաւ և ասաց. «Սպանում է՝ թող այսօր սպանէ, որ մարդիկ ասեն, թէ մի երեսայ է սպանել: Ես նորա թրի տակով չեմ անցնի. այսպէս է անում, որ էգուց ես մեծանամ սուր չըարձարցնեմ իւր վերայ»:

Քեռի թորոսը ահից դոցա ժողովեց միատեղ, որ ամեն թրի տակով անց կացնէ: Գաւթի ընդդիմացաւ կանգնեց և չի գնում թրի տակ: Քեռի թորոսը բարկացած բռնեց Գաւթի օձիքը և հրեց, որ անցնի թրի տակով: Գաւթի չգնաց թրի տակով, այլ կշտով անցաւ, և իւր մեծ բուժը ջարդու քարի վերայ քսուեցաւ՝ կրակ դուրս ելաւ նորանից: Երբ որ Մսլամէլէքն այս նկատեց՝ ասաց. «Գա որ դեռ փոքր է՝ այսքան է, որ մեծանայ՝ ինչ կը լինի: Եթէ ինձ մի վնաս պատահի՝ դորանից կը լինի»:

Քեռի թորոսը առաւ տղերանց և Սասուն եկաւ: Ամենին պաշտօնի կարգեց, ինչպէս կը վայելէր. Յանվէզուն բերրի մէջ թաղաւոր դրեց հօր տեղ, և Գաւթին՝ որ ամենից պտտիկն էր՝ հորթապահ արեց:

Գաւթի մի օր մի դականակ զարկելով քառասուն հորթ էլ հետ գլորում էր: Զօռ շատ ունէր, բայց հորթապահութիւն լաւ չտիրեց:

Գաւթի մի օր մի դականակ զարկելով քառասուն հորթ էլ հետ գլորում էր: Զօռ շատ ունէր, բայց հորթապահութիւն լաւ չտիրեց:

Մի օր էլ քշեց հորթերին հանեց սարի գլուխ, տեսաւ որ հորթարածի մէկը իւր հորթերին անիծում է: Դաւիթն այս կողմից գնալով՝ ասաց. «Այ մարդ, դու ի՞նձ ես անիծում: Կաց գամ մի դադանակ տամ գլխիդ, որ սասանես»:

Իսկ նա պատասխանեց Դաւիթին. «Գլխիդ արևիդ մեռնում ես էլ քեզ պէս քո հօր գիւղը հորթարածն եմ, ու սոքա ուամկի հորթերն են»:

— Եթէ այդպէս է, ասաց Դաւիթը, արի եղբայրանանք: միայն ես հորթատարի ճիշդ ժամանակը չգիտեմ, իմ հորթեր էլ դու պահիր. երբ որ գնալու ժամանակ լինի, իմ առաջը քշիր, որ տանեմ:

Եւ այդ օրը ճիշդ ժամանակին հորթերն առաւ ու եկաւ գիւղ: Ուրախացաւ քեռի թորոսն ու ասաց. «Որդի, ահա այդպէս աչքաբաց եղիր, ամենայն օր ժամանակին գնա ու արի»:

Դաւիթն ասաց. «Քեռի, այդ իմ շնորհքը չէր, ես մի եղբայր եմ բռնել, ամենայն օր պիտի պահէ իմ հորթերը, ես էլ պէտք է լաւ տիրութիւն անեմ»:

Մի օր Դաւիթ ընկերն ուշացաւ. Դաւիթը շատ նեղացաւ: Դու մի ասա, այն տղայի գիւղում ցատման ժամ պատարագ էր, տղան էլ այդ պատճառով ուշացել էր: Եւ երբ որ եկաւ՝ Դաւիթն ասաց նորան. «Իմ ձեռքիցս այս օր ի՞նչպէս պէտք է ազատուիս»:

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արևիդ մեռնիմ, մի նեղանար: Ես քո ահիցդ էլ չմնացի մինչևի վերջ. և այն ցասման ճաշից մի գդալ էլ չկերայ, քշեցի հորթերն ու եկայ: Բայց ի՞նչ անեմ, որ իմ բախտիցս էլի քիչ ուշացել եմ:

Դաւիթը գթացաւ նորա վերայ, որ ճաշ չէ կերել, և ասաց. «Դու այդ տեղ նստիր, ես գնամ քո ճաշն առնեմ բերեմ»:

*

Դաւիթը դրեց կօպալը ուսի վերայ և գնաց: Գնաց մտաւ գիւղացուց մէջ տեսաւ որ հարիսէքը բոլոր հանել զրեւին կալում և քահանայք եկել օրհնում են: Դաւիթը կօպալը ձգեց մի չորս կանթանոց լեքը պղնձի մէջ և ուսի վերայ շարկեց: Չարմացան այդ տեղի ժողովուրդն ու քահանաները: Նոցանից մէկը ասաց. «Սա մեր պղնձը տարաւ է»:

Քահանան ասաց. «Թէ Աստուած կրսիրէք, ձայն մի հանէք. դա Աստուծի գծերիցն է. որ դառնայ մեզ Չարդ ու փշուր կ'անէ. թող տանի՝ իւր գլուխն ուտի»:

Իսկ Դաւիթը կերակրով լեքը պղնձը ուսին՝ ընկերին է բերում: Տեսաւ ընկերը նստած լայ է լինում:

«Հէ, հէ, ասաց զուարճանալով, գիտեմ ինչի՞ ես լաց լինում. ճաշդ բերելեմ, աղ ու եղ չեմ բերել, նեղանում ես: Արի հիմա կեր ձաշդ, երեկոյին էլ վռէն աղ ու եղ կեր, էլ պակաս ոչինչ չես ունենայ»:

— Դաւիթ, ասաց տղան, գլխիդ արևիդ մեռնիմ: Ես այն ու եղը ի՞նչեմ անում: Քառասուն աւազակ դեեր դուրս եկան մեր հորթերը տարան գնացին:

«Դու այդ տեղ կաց, պատասխանեց Դաւիթը, այդ տեղը հորթերիդ նայիր. ես գնամ մէկէլները դարձնեմ»:

Եւ ընկաւ հորթերի ետևն ու գնաց, հետքը բռնեց և մի այրի դռան առաջ կանգնեց: Այդ տեղ Դաւիթը այնպէս պինդ գոռաց, որ միջի գեերի վերայ սարսափ թափուեցաւ (ինչպէս որ Քրիստոսի ձայնն ընկաւ զժողովի մէջ և սատանէքը սասանեցան): Այդ աւազակների մեծն երբ որ լսեց, ասաց. «Այ մեզ, դա Դաւիթն է Աբամէլէքի տղէն, ելէք գլուխ տուեցէք և ծառայեցէք, որ մեզ չսպանէ»:

Մէկ մէկ դուրս եկան, և Դաւիթն էլ մէկ մէկ կօպալ վարկեց, այնպէս որ քառասունի գլուխը թուցրեց, զիակը թո-

դեց մնաց: Այդ քառասունի էլ ականջները կտրեց և տարաւ
 այրի մօտ մի քարի տակ պահեց: Այրի դուռը կօպարով
 կրկնահասն աներով ներս մտաւ և տեսաւ, որ մի կոյտ ոսկի է,
 մի կոյտ արծաթ, աշխարհքի բարութիւնն ու հարստութիւնը
 այն տեղ էր: Քանի որ իւր հայրը մեռել է, և ինչ որ աւել
 բութիւն են արել դռքա, բոլորն այդ տեղ էր լցոած:

Մի ուրիշ դուռ բաց արաւ և տեսաւ այն տեղ մի ձիու
 քուռակ կանգած: Ինքնիրան խօսեց և ասաց. «Քեռի, այս
 դանձր բոլորը քեզ, բայց այս անասունն ինձ լինի, տալիս ես՝
 տուր, չես տալիս՝ քեզ էլ սոցա օրին կը հասցնեմ»: Ինքը դար-
 ձեալ իւր զլխին պատասխանեց. «Որդի, դանձն էլ քեզ, ա-
 նասունն էլ քեզ, ես ի՞նչ եմ անում»:

Դարձաւ տեսաւ, որ քառասնականթ մի պղինձ դրուած
 է օձախի վերայ, քառասուն հորթեր էլ մէջը: Կօպարը մտցը-
 րեց կանթերի մէջ և պղինձը վերցրեց. ջուրը դատարկեց և
 հորթերի ոտքերն էլ մէջը թափեց, շալակեց ու գնաց:

Եկաւ ընկերի մօտ, առաւ նորան ու մնացած հորթերը
 և դարձաւ եկաւ դիւղը: Կանչեց հորթերի տերերին, աչքերը
 լաւ խոթողեց նոցա վերայ և դուռաց. «Եթէ այս իմ եղբոր
 մի մատի չափ վարձը կտրէք, վայն եկել է ձեզ, տարել: Այս
 պղինձն էլ ձեզ լինի, ծախեցէք և թող ձեր հորթերի զինը
 լինի»:

Ինքն էլ ջոկեց իւր հորթերն ու կէսօրին տուն եկաւ
 քեռի թորոսին ասաց. «Կնա, առ քսան ջորի, և երթանք այն-
 քան ապրանք բերենք, որ դու էլ ուտես, (քո եօթը՝ պորտն
 էլ մինչև երբ ես պէտք է հորթարած մնամ»:

Առան ջորիք ու գնացին: Գնացին մօտեցան այրին, քեռի
 թորոսը տեսաւ որ դեերը թափուած են այրի դռան առաջ
 և ուռել են մի մի բլրի չափ: Երկիւղեց իւր ջորին միւս ջորի-

ներից պրծացրեց ու վախաւ: Գաւիթը ծիծաղեց ու ձայն
 տուեց. «Տեսե՛ք, ես դոցա ողջերից չվախեցայ, դու մեռելնե-
 րից ի՞նչ ես վախճում»: Քեռի թորոսն ասես իսկի լսում է նորա
 խօսքերին, մի բերան վախճում է: Գաւիթը էլի ետեից ձայն է
 տալիս. «Թէ չես հաւատում, դարձիր քո ետև, քարի տակ
 նայիր, բոլորի ականջները այդ տեղ եմ թափել»:

Քեռի թորոսը որ տեսաւ, դարձաւ առաւ ջորիներն ու
 մտաւ այրը. ինչ կար չկար ժողովեցին, բեռներ բարձեցին:

Գաւիթն ասաց. «Քեռի թորոս, այս ապրանքը բոլորը
 քեզ, իսկ այս անասունն ինձ, տալիս ես տուր, չես տալի՛ քեզ
 էլ սոցա օրին կը հասցնեմ»:

Մա էլ սրտասխանեց. «Որդի, ապրանքն էլ քեզ լինի,
 անասունն էլ, ես ի՞նչ եմ անում»:

Երբ որ քեռու բերանից խօսքն առաւ, հեծաւ քուռակի
 վերայ և քշեց մէկ այս կողմ մէկ այն կողմ (ի՞նչ քուռակ
 նորա զօրութիւնը ոչ մէկ լեզու նկարագրել չի կարող):

659

Այսպէս ապրանքով բեռներով եկան Սասուն: Գաւիթն
 այնուհետև հորթերից ձեռք վեր առաւ, մի լաւ բազէ գտաւ
 և արտերն ընկաւ՝ որս անելու:

Մի օր եկաւ մի աղքատի արախ հանդիպեց, որ եօթը
 հոգուց բաղկացած մի ընտանիք ունէր, և միայն եօթը կորի
 կորեկ. նոցանից չորսը աւերեց, մնաց երեքը:

Տեսնողներից մէկը եկաւ լուր բերեց աղքատ ծերունուն
 և ասաց. «Քո տունը չքանդուի, վեր կաց զնա արտդ տես,
 թէ չէ զիշերը Գաւիթը կուզայ մնացած երեք կորին էլ կա-
 ւերի»:

Խեղճ ծերունին առաւօտեան լուսաբացից առաջ մինչև
 աղօթք արեց՝ վեր կացաւ զնաց, տեսաւ որ արտը փչացրել է:
 Գաւիթն էլ բազէն ձեռքին, քուռակի վերայ հեծած, եկաւ:

Այդ տեղ ծերն անիծեց Գաւթին և ասաց. «Դու Ասածուց բնաւ չնս վախենում, որ իմ կրեկի վերայ ես բանեցնում քո կործութիւնը, ես եօթը հոգի ունիմ պահելու և նոցա համար եօթը կորի կորեկ. չորսը փչացրել ես, մնացել է երեք: Եթէ իրաւ կտրիճ ես, զնա քո հօր կալուածքը յետ առ, որ Ծծմակայ գլխից սկսած մինչև Սեղանսարի գօտին է զնում և Մսլամէլքը գրաւել ուտում է: Գնա այն առ, ի՞նչ ես կտրիճ դառել իմ գլխիս»:

— Ծերունի, ասաց Գաւթիթը, ինձ մի անիծիր, սա մի բուռն ոսկի և քո ապրուստը հոգացիր: Եւ սպանեց բազէին:

Գաւթիթը նոր իմացաւ, որ ինքը շատ բանից զրկուած է եղել մինչև հիմայ և ասաց. «Քեռի թորոս, վեր կաց իմ հօր կուրզն ու նետը տուր ինձ, իմ հօր կալուածքը օտարներն ուտում են և դուք ինձ ոչինչ չէք ասում»:

Քեռի թորոսն ելաւ զնաց Յանվէզու մօտ, ուզեց նորա հօր կուրզն ու նետը: Յանվէզին չտուեց: Գաւթիթը մի անդամ էլ դարձրեց ու ասաց. «Տալիս ես՝ տուր, չես տալ՝ կու դամ կրմարմնեմ, գլուխդ կ'երթայ, դիակդ կը մնայ»:

Յանվէզին վախից տուեց իւր հօր կուրզն ու նետը, և քեռի թորոսը բերեց տուեց Գաւթին:

Այդ զիշեր Գաւթիթը քնեց մի երազ տեսաւ: Երբ որ զարթեցաւ, առաւ քառասուն երինջ ու զնաց սուրբ Մարաթուկայ բարձր մատուռը: Երինջները մատաղեց, շատ լաց եղաւ և երեսն ի վայր աղաչեց Ասածուն, Աստուած էլ նորան սուրբ Նշան ուղարկեց (հիմայ էլ կայ այդ ս. Նշանը): Նա համբուրեց սուրբ Նշանը, դրեց աջ ծոցը պահեց, մի օանր էլ ձախ ծոցը պահեց:

Ե.

Մսլամէլքը լսեց, որ Աբամէլքի տղէն հաստին առել է

և վեր է կացել զալիս է իւր վերայ կռիւ: Իւր կողմից էլ զօրք ժողովեց և խօլբաշուն յանձնեց: Սա վեր կացաւ, որ գայ Մարաթուկ Դաւթի վերայ: Տեսաւ, որ ճանապարհի վերայ կանայք կան կանգնած, հետաքրքիր նայում են նորան և նորա զօրքին, նա ասաց նոցա. «Ուրախացէք, երգեցէք, պար եկէք մինչև իմ դալս»:

Նոքա պատասխանեցին. «Մենք ի՞նչ ասե՞նք և խաղանք. մենք չգիտենք ի՞նչ ուրախութիւն պէտք է տեսնենք, որ այն ասե՞նք ու երգենք»:

Խօլբաշին ասաց. «Անպիտաններ, դուք չէք իմանում, թէ շուտով պէտք է տեսնէք իմ յաղթութեան փառքը. ահա կարճ իդ էլ երկէնիդ էլ սովորեցնեմ, թէ ինչպէս պէտք է դովէք ինձ, երբ ես փառքով վերադառնամ»:

- Կարճ կրնկովք երկանք աղան,
- Երկէն կրնկովք ուղտեր բառնան.
- Մեր խօլբաշին կ'երթայ Սասուն,
- Աճոյ եզներ բերէ լծան,
- Կարմիր կովեր բերէ կիթան.
- Կու գայ զարուն, կու գայ, և մենք
- Իւղ ու չորթան շատ կը շինենք:

Մէկ էլ տեսաւ, որ կանայք սկսան այդ երգել և խաղալ: Իսկ ինքը առաւ զօրքն ու եկաւ մտաւ Մարաթուկայ բակը լցրեց:

Այդ Մարաթուկայ քահանայի աղջիկը Գաւթի հարսնացուն էր, նա եկաւ լուր բերեց Դաւթին և ասաց. «Դաւթի, գլխիդ արեւիդ մատաղ, վեր կաց տես, որքան զօրք է մտել բակի մէջ, անթիւ զօրք է»: Աղջիկը ասաց, զնայ և ետեւից դրան փակը քաշեց, որ ոչ ոք չիմանայ իւր արածը:

Գաւթիթը թուաւ ելաւ և կանչեց. «Նս՛ հաց գինի, տէր

կենդանի» և զօրքի մարդերին բռնեց, գլխները մարմնեց, ա-
մենի դիակը գնաց պարսպից զուրս, գլուխը մնաց բակի մէջ:
Խօլբաշուն էլ բռնեց, նորա ատամները հանեց և շարեց ճա-
կատին, և նիզակն էլ շան խառանի պէս շինելով՝ կախեց վրեց,
ինչպէս որ շան վզեցն են կապում՝ և ասաց. «Գէհ, գնա լուր
տուր Մսլամէիքին. թէ էլի մարդ ունի՝ թող ժողովէ իւր
կշտին, հիմա ես եմ գալի նորա դէմ»:

Խօլբաշին այսպէս խայտառակած էլի այն կանանց միջով
անցաւ, որոնք իւրեանց խաղն ու խնդումը շարունակում էին:
Բայց երբ որ նորան տեսան՝ նոցանից մէկը վեր կացաւ և
ասաց.

«Խօլբաշի ջան, Խօլբաշի,
Մեղնից գնացիր քանց դայլ գազան,
Հիսի եկար քանց շուն վազան,
Վիզդ է նիզակ քանց շան խառան,
Բերանդ է բաց քանց պատուհան,
Բերնիդ փրփուրն, ասես թէ թան,
ձանձեր ունի շարան շարան»:

Խօլբաշու նեղը որ եկաւ՝ պատասխանեց.

«Տ՛՛՛՛՛ անզգամ, լեզուդ կորիր.
Հէնց դիտեմ թէ Սասուն դաշտ ու դուրան էր,
Չ'իմացայ թէ քարքարոտ ու կապան էր.
Այն տեղ մարդիկ չեն, այլ դէի զաւակներ,
Նետեր ունին քան ձիթհանքի գերաններ,
Մէկ որ խփեն՝ ճեղք կը ձղեն պատուհան.
Ինչ մարդ տարայ, դիսի էլ եղան հոգեհան:
Գարուն՝ որ ջուր ուռչի դառնայ մեծ հեղեղ՝
Մեծ ու պտիկ շատ կը ժողուէ միատեղ—
Այն ժամանակ ձեզ շատ շինեք չորթան եզ:

*

Այժմ՝ Գաւիթն ինքը վեր կացաւ և գնաց Մսլամէիքի
վերայ. այն ժամանակ եկաւ, երբ որ նա արդէն ահագին զօրք
ժողովել նստել էր Սեղանսարի գօտու վերայ. զօրք բազմաթիւ
սպիտակ վրանների մէջ էր գետեզուած, նոցա մէջ ամենից մեծն
ու երեւելին մէջ տեղի կարմիր վրանն էր: Գաւիթն ասաց. «Ռախտ
եմ՝ դնում, որ մինչև կարմիր վրանի տակ եօթն բրինձ փլու-
չուածեմ՝ կախ չանեմ»:

Եւ այս ասելով՝ այդ տեղից պտտեց արեւպտի կողմից
համարձակ յարձակուեցաւ. եկաւ և վրանի դէմուղէմ կանգ-
նեց: Երբ որ այն զօրքը այս ձխաւորներին տեսաւ՝ ահի մէջ
բռնուեցաւ և վախեցաւ: Մեղքը հարցրեց. «Դու ի՞նչ մարդ ես»:

— Ես արեւպտոց թագաւորի տղէն եմ, ասաց Գաւիթը
ձեզ օգնելու եմ եկել:

Մեղքը վրան զարկեց՝ եօթն օր միասին հաց կերան.
ու թերորդ օրը էլաւ Գաւիթն իւր ձին հեծաւ, երկու անգամ
յետ ու առաջ չափ ձգեց, գնաց եկաւ, ասաց. «Վեր կաց, ես
եկել եմ քեզ հետ կախ անելու. մինչև երբ պէտք է իմ հօր
կալուածքն ուտես»:

Մսլամէիքը նոր իմացաւ, թէ ում հետ կերուխում ա-
րեց, գլուխը շարժեց և հրամայեց զօրքին, որ ոտքի կանգնի:

Կախն սկսեցին: Գաւիթն իւր կարճ աղօթքն ասեց,
«Հացն ու զինին, Տէր կենդանին»:

Այս ժամին թորոսն էլ հասաւ: Նա լսել է սոցա կուրը,
մէկ բարախ ծառ քորեհան է արել, ուսին է դրել և գալիս է:
Եկաւ ու կանգնեց ձորի գլխին, իսկ նոքա ձորի մէջ կախ են
անում: Եթէ մէկը փախչել է ուզում և վեր է բարձրանում,
Գաւիթը գոռում է. «Բեռի թորոս, դու ձորի, ես ձորթփեմ»:
Շատին ջարդեցին, շատին կոտորեցին, զօրքը նուազեց:

Այս միջոցին զօրքի մէջ արտունջ ծագեցաւ. ոտքի

կանգնեցին և բողոքեցին. «Եթէ դուք քաջեր էք, դուք պէտք է միայն երկուսովդ մենամարտէք. և յաղթութիւնը յաղթողին լինի»:

Երկու եղբայրները համոզուեցան այս խօսքով, տեսան որ մարդկանց ի զուր կոտորում են: Եկան կանգնեցին մէջ տեղ. մէկն ասում է՝ «Դու նստիր, ես զարկեմ»: միւսն ասում է՝ «Չէ, դու նստիր»: Վերջապէս համաձայնուեցան, որ փոքր եղբայրը — Դաւիթը նստի:

Դաւիթը քաջեց վահանը գլխի վերայ, բռնեց Սուրբ Նշանը վահանի տակ ու նստեցաւ: Մսլամէլէքը երեք ժամի ճանապարհ հեռացաւ և այն տեղից շտապով եկաւ, զարկեց մի գուրգ ու ասաց. «Հող ես, հող դառնաս»: Իսկ Դաւիթը պատասխանեց. «Հաւատամ խոստովանիմ, բարձր Մարաթուկի Ս. Նշան. քեզ պէս զորաւոր պաշտպանի տակ, ես այնպէս եմ, իբր թէ կանաչ կարմիր վրանի տակ նստած՝ հանգիստ բրինձփլաւ եմ ուտում»: Մսլամէլէքն այսպէս երեք անգամ զնաց եկաւ զարկեց ու ասաց. «Հող ես, հող դառնաս». Դաւիթն էլ երեք անգամ իւրը պատասխանեց:

Այս անգամ նստելու կարգը Մսլամէլէքին եկաւ, բայց նա յամառեցաւ, կանգնեց և չուզեց նստել: Բոլոր զօրքը մեղադրեց նորան թէ անօրէն է վարվում, այնպէս որ ամօթից վերջապէս եկաւ, վահանը բռնեց գլխին և նստաւ: Այս միջոցին Մսլամէլէքի մայրը Դաւիթին զրպարտել ուզեց և ասաց. «Դաւիթ, գլխիդ արեւիդ մատաղ, չէ որ դա քո եղբայրն է, մի զարկիր, մեղք է»: Դաւիթի սիրտը շատ խոցուեցաւ և պատասխանեց. «Ա՛յ անօրէն, ինչու մինչև հիմայ չէիր ասում, թէ քո եղբայրն է, երբ առ ինձ էր զարկում: Բայց թող քո խօսքը լինի. ես պէտք է երեք անգամ զարկէի՝ մէկ հարուածը նուիրում եմ Աստծուն, մէկը բաշխում եմ քեզ, որ նորա մայրն

ես. իսկ իմ բաժին միայն երրորդը պիտի զարկեմ: Կամ մեռնի կամ մնայ»:

Գնաց եկաւ Դաւիթն և իւր զուրգն այնպէս զարկեց, որ Մսլամէլէքին եօթն գազ գետինն իջեցրեց, և Մուսուլին տիրելով՝ նստեց թագաւորական գահը:

Դա մնաց այդ տեղ:

Զ.

Դաւիթի քաջութիւնների համբաւը ամէն տեղ տարածուեցաւ: Կաղզունայ ամիրան մի աննման աղջիկ ունէր, անունը Խանդուզ խանուս: Սա էլ լսելով Դաւիթի քաջագործութիւնները, շատ ոսկի արծաթ տուեց մէկ աշուղի և ասաց. «Գնա իմ գովասանքն արա Դաւիթին, ասա որ շատ իշխաններ են ուզում ինձ առնել, բայց միայն Դաւիթն եմ ընտրել, նա պէտք է լինի իմ ամուսինս. եթէ քո խաղը նորա սիրտը գրաւէ և նա զայ ու մենք իրար առնենք, այս ոսկին ու արծաթը քեզ վարձ լինի»:

Աշուղն առաւ իւր դամբուռը, ոսկու արծաթի լարեր քաշեց վրէն, զնաց Սասուն իւր աննման խանուսի գովքը հռչակելու: Եկաւ բարձրացաւ Յանվէզու բերդը, կարծելով թէ Դաւիթն այն տեղէ նստած: Նստաւ և երգեց Յանվէզուն խանուսի զեղեցկութիւնն ու իմաստութիւնը:

Յանվէզին այս լսելով՝ բարկացաւ և իւր պահապաններին հրամայեց. «Տղէքք) վեր կացէք ծեծեցէք սորան և դուրս արեցէք. դա եկել է, որ իմ եղբօրը խաբէ տանէ»:

Խեղճ աշուղին ծեծեցին և տարան ձգեցին ձորը ճանապարհի վերայ: Երեկոյեան հօտաղները իւրեանց եզներին հեծած՝ զիւղն էին գալիս: Անցնելով այդ տեղից, ուր աշուղն էր ձգուած, մէկի եզը խրտնեց, և վրայի նստողը վայր ընկաւ:

Նորան որոնելով՝ գտան և աշուղին: Աշուղը լաց եղաւ, աղանջեց, որ օգնեն և հարցրեց. «Այդ բերդի մօտ նստողն ո՞վ է»: Եւ նորա պատասխանեցին. «Գա Յանվէզին է, իսկ նորա եղբայր Գաւիթը այդ տեղ չէ, այլ Մոսուլումն է»:

Աշուղը ոսկի հանեց տուեց այդ հօտաղներին, նորա ժողովեցին նորա դամբուռի կտորտանքը, տուեցին իրան և ճանապարհը ցոյց տուեցին:

Աշուղը գնաց Մոսուլ և խանդուղ խանութի սիրտը յայտնեց Գաւիթին: Գաւիթը երկար լսեց նորա խաղը, շատ հաւանեց խանութի գովքը, շատ պարգև տուեց աշուղին և ասաց. «Գու գնա, ես կուգամ»:

Աշուղը դարձաւ բոլորը պատմեց խանութին:

Գաւիթը Մոսուլից ճանապարհ ընկաւ և ողլակի եկաւ Սասուն և այն տեղից Ծծմակայ քիթ, ուր ճանապարհը վերայ մի գուլթան տեսաւ. արձակեց գուլթանի տաւարը և մէկ կողմ քշեց. իսկ ինքը շղթան ձեռքն առնելով՝ նստաւ ձի: Այս կողմից քաշում էր գուլթանը՝ հանում էր լերան գլուխը, և այն կողմից քաշում վայր էր բերում ցած. և այսպէս Սև սարից գլխի վայր եկաւ մինչև Մառնիկ գիւղի գլուխը: Եկաւ տեսաւ, որ մի գոմէշ տղմից դուրս եկաւ և կանգնեց առաջը: Գաւիթը, որ ամենեւին այդպիսի բան չէր տեսել՝ կուրջ ուղղեց, որ զարկի գոմէշին:

Այն կողմից մի հօտաղ դուրս եկաւ, որ գոմէշն հայհոյում էր: Գաւիթ կարծելով, թէ նա իրան է հայհոյում ասաց. «Որդի, ես քեզ ի՞նչ եմ արել, որ ինձ հայհոյում ես»:

—Քեզ հետ ո՞վ է, եղբայր, պատասխանեց հօտաղը. դու Սասնոյ գժերից հօ չե՞ս, որ աշխարհք չես տեսել. ես իմ գոմէշին եմ հայհոյում:

«Որդի, ինչու ես նեղանում. ամօթ բան է միթէ, ես այդպիսի բան չեմ տեսել. մեզանում այդպիսի բանին չեն հայհոյում: Գորանից շատ կայ ձեր երկրում»:

Եւ նա ասաց. «Սրի քեզ ցոյց ասմ»:

Գնացին դաշտը, ուր մի գուլթան են լծել գոմէշներով և քաշում են: Գաւիթ տեսաւ, որ գոմէշները տաքից լեզուները դուրս են հանել ու գուլթան են քաշում: խղճաց նոցա վերայ, արձակեց գոմէշներին և տարաւ լցրեց լիճը. իսկ մաճկալն առնիծեց նորան:

Մաճկալ, ասաց Գաւիթը, ինձ մի անիծիր. այդ գուլթանի շղթան ինձ տուր: Բռնեց շղթան, մաճկալը կանգնեց վերան և Գաւիթը քաշեց գուլթանը ինն պտոյտ տարաւ բերաւ:

Այդ քո հնարը չէ, ասաց մաճկալը, իջիր ձիուց և սպա քաշիր տեսնենք քո շնորհքն է, թէ ձիուն: Գաւիթը ձիուց իջաւ, տանը պտոյտ էլ քաշեց առանց ձիու: Այս անգամ մաճկալն ասաց. «Գաւիթ, քեզ մատաղ լինիմ. կես օր է, նստիր հաց կեր և այնպէս գնա»:

—Չէ, կ'երթամ, ասաց նա, թող ձեր տղայքը հաց ուտեն. եթէ ես ուտեմ՝ նոցա էլ բան չի մնայ:

Վերջապէս նստաւ և երբ որ հաց դրեցին, Գաւիթը բոլոր հացերը ժողովեց և մի անգամից քասէք սրբելով բերանը դրեց:

Հօտաղը բերան բաց մնաց ու ասաց. Նաման, վեր կացէք փախէք, թէ չէ դա մարդ էլ կ'ուտէ»:

Գաւիթն ասաց. «Գուլթան քաշողն ի հարկէ հաց կ'ուտի, հապա ի՞նչ կ'անէ»: Եւ այդ տեղից ճանապարհ ընկնելով գնաց խանդուղ խանութին:

Է.

Դաւիթը զնաց հասաւ Խանդուղ խանու մի պալատի դուռը: Այդ այն պալատն է, ուր որ Խանու մի ուզողները գալիս են և իջևանում են: Գռանը միշտ կանգնած է մի մարդ, որ ձեռին թուփուզ ունի: Դաւիթը հարցրեց նորանից. «Ա՛յ տղայ, անունդ ի՞նչ է»:

— Իմ անունս Գորգիլ է, պատասխանեց նա: «Գորգիլ, ես Դաւիթն եմ, եկել եմ Խանդուղ Խանու մին ուզելու. քեզ ես շատ հաւանեցի, և երբ որ Խանու մին առնեմ, քեզ էլ ինձ քաւոր կ'անեմ»: Գորգիլը գլուխը շարժեց և ասաց. «Ուր է, որ մեր աննաման Խանու մը մարդ ուզէ. շատ քաջ մարդիկ են գալիս նորա ձեռքը խնդրելու, բայց ոչ ոք ինչ հաւանում, և միշտ ասում է, թէ իմ սրտի ուզածը ուրիշն է»:

Դաւիթը հարցրեց. «Գորգիլ, ո՞վ կայ ներսը»:

— Շքերդան Խորասական, Հրմկայ Լուայ մեծանուն իշխանների հարսնախօսներն են եկել, ասաց Գորգիլը:

«Իմ ձին դու քաշիր կապիր» ասաց նորան Դաւիթը:

Գորգիլը քաշեց կապեց:

Յետոյ Դաւիթը հարցրեց. «Այդ ի՞նչ թուփուզ է, որ առեւէ են քո ձեռքդ, տուր տեսնեմ»: Եւ ձեռքից թուփուզն առնելով ձգեց, որ մինչև այսօր դեռ էլի անվերջ գնում է: Գորգիլը նոր իմացաւ, թէ ինչ մարդու հետ է պատահել:

Դաւիթն ասաց. «Քաւոր Գորգիլ, այժմ ներս գնանք կեր ու խում անենք»:

Ներս գնացին, ուր որ հարսնախօսները նստած էին. Դաւիթը նստաւ. յոգնած է և քաղցած: Այն մարդիկ իմանալով, թէ Դաւիթն ով է և թէ ինչու է եկել, ուզեցին նորան քնացնել և սպանել: Նոքա վերցնում էին մէկ մէկ կթղայ գինի

և Դաւիթին էին տալիս. Դաւիթի ծարաւը չէր կտրվում, և էլ չը համբերելով՝ մի անգամից վերցրեց գինու տաշտը և բորբոք խմեց ու անաց. «Գէ ասացէք հիմի. Անուշ եղաւ»:

Բայց գինին Դաւիթի գլուխն ընկաւ և Դաւիթին տարաւ: Երբ որ Դաւիթն այսպէս է լինում, և գինուց գլուխը խոնարհեցնում ու զնում է գետնի վերայ, այն մարդիկ հանում են իւրեանց թրերը, որ զարկեն, իսկ երբ որ Դաւիթը գլուխը վեր է բարձրացնում, նոքա թրերը դնում են ծնկների տակ: Մի անգամ էլ որ այս կրկնուեցաւ՝ քաւոր Գորգիլը կանչեց. «Սա նահայր Դաւիթ, այս տեղս վնաստուն է, վրաստան չէ»:

Դաւիթն երբ որ այս լսեց, կանչեց. «Շուտ արա դուռը բռնիր»:

Բայց մինչև Գորգիլը դուռը կրփակէր, այդ մարդիկն ելան փախան, մէկ մէկ ասպտակ էլ տալով Գորգիլին:

Դաւիթը հա թէ նոր հանգստացաւ: *

Որ զարթեցաւ Դաւիթը կանչեց Գորգիլին և հիմի հարցրեց. «Խանդուղ Խանու մին ո՞ր տեղ տեսնե՞ք»:

— Դարպասի բախշի մէջ. ասաց Գորգիլը, այս օր կիրակի է, նա այն տեղ կըլինի. քսան նաժիշտներ նորա առաջն կըլինին և քսանն ետեւից՝ զնանք հեռուից տեսնելու:

Սովորութիւնն այնպէս էր, որ Դաւիթը առաջ հօրը պէտք է տեսնէր, բայց նա ու Գորգիլը գնացին կպան պարտիզի պատին և կանգնեցան: Նաժիշտները մէկ մէկ եկան և անցան. եկաւ և Խանդուղ խանու մը: Դաւիթը չը համբերեց մինչև հօր տեսութեան, ձեռքը ձգեց խանու մի վզին և երեք համբոյր առաւ նորանից: Խանու մը այս անգամ ոչինչ չը խօսեցաւ, գիտէր որ իւր Դաւիթն է: Բայց Դաւիթը չորրորդեց համբոյրը. այս անգամ Խանդուղը բռնեց Դաւիթի փողպատը զարկեց նորան պատին, և Դաւիթի քթից արիւն վազեց:

Գաւիթը ամեն տեսակ ցաւի կսկիծը կը տանէր, բայց նորա սիրտը շատ խոցուեցաւ, որ մէկ կին այսպէս անպատիւ արեց իւրեան: Սաստիկ բարկացաւ և այդ տեղեց դարձաւ որ ձի նստէ, ուխտեց իւր ս. Նշանին և ասաց. «Քաւոր Գորգիլ, քաշիր ձիս, որ այս քաղաքն աւերեմ»:

Գորգիլը աղաչելով ասաց. «Աստուած սիրես, հիմա թող մնայ, մութն է. լուսին վեր կաց աւերիր զնա»:

Գաւիթը թէև համբերեց, բայց մահճի մէջ պատկած Ժամանակ բարկութիւնից չի կարողանում քնել. սպասում է, թէ երբ պէտք է լուսանայ, որ այս քաղաքը աւերէ և զնայ:

*

Իսկ խանդուղ խանումը դեռ էլն պարտիղն մէջ զբօսնում էր. կաղ նաժիշտն եկաւ և ասաց. «Ի՞նչ սև Ժամին ես զբօսնում. ահա Գաւիթը պատրաստվում է քո պապական քաղաքն աւերել և զնալ»:

Գնացին հագնուեցան, կապեցին իւրեանց բոխէն, քօղ ծածկեցին և դարձան. և ուղղակի եկան իջւանի դուռը ծեծեցին, որ բանան:

Գաւիթն որ նոր անոյշ քուն էր մտել. ասաց. «Ո՛հ, ո՛հ, ինչ անամօթ են այս քաղաքացիք, մինչև առաւօտ չեն համբերում, ասում են՝ ել աւերիր և զնա»:

Գորգիլը դուրս եկաւ ահով պատշգամբ. բայց երբ որ եկողներին տեսաւ, հանդարտուեցաւ և ասաց. «Եկողներից մնաս չը կայ, նոքա քօսա են, պօզերով չեն»: Գաւիթը հասկացաւ, որ եկողները կանայք են: Գուռը բացին:

Խանդուղը եկաւ իւր նաժիշտներով Գաւիթի մօտ և խօսեցաւ. «Գաւիթ, ասում են որ դու բարկացել ես իմ վերայ, որ ես քեզ անպատուեցի: Բայց գիտնս, թէ ինչու անպատուեցի: Գաւիթ, դու ինձանից մի համբոյր առար ուխտած ճանապարհիդ համար, մէկն էլ առար քեզ համար, որ կորիճ

ես, երրորդն էլ՝ Աստուծոյ սիրոյն համար: Աւելի պազը ի՞նչ բանի համար առար: Եթէ դու քօ հօր կորիճն ես, ես էլ իմ հօր կորիճն եմ: Ասած է. աղջկան ազատիր եղիղների ձեռքիցն, որ տղին ասեմ՝ թէ տղայ մարդ է: Գու որ ինձանից աւելի պազ ես առնում՝ միթէ Շքերդան - խորասական Նօրայ - շրմ զայ հսկանների գլուխն արդէն բերնել ես ինձ, որոնց հարմնախօսները միշտ զալիս են մեր տունը և ճանճարայնում են ինձ»:

Գաւիթը այս խօսքերից կակղեցաւ և ասաց. «Եթէ այդպէս է, լուսին ես կ'երթամ նոցա գլուխը կը բերեմ քեզ: Ես ասացի և կ'երթամ. բայց եթէ բաղդս այնպէս կորէ, որ նոքա ինձ յաղթեն և սպանեն, դու եթէ սիրում ես քօ Ասածուն՝ արի իմ դիակը փնտուիր, աջ թևիս վերայ կայ մի մնէ խաչայտնչանով ճանաչիր, վեր առ, բեր, թաղիր, բայց մի թող որ նոքա այն տեղ անպատու են մարմինս»:

Գաւիթը զնաց ճանապարհ ընկաւ:

*

Շատ զնաց, քիչ զնաց, այն հսկանների աշխարհքին մօտեցաւ: Հսկանները տեսան, որ այն տեղից մի ձիաւոր է զալիս, ձիաւորի թողը երկինք է հասնում: Ասացին. «Այդ ձիաւորը կուռի համար է զալիս, միայն թէ չը լինի, որ դա Սրբոյի ձորտերիցն է»:

Երբ որ ձիաւորը մօտեցաւ, նոքա կանչեցին. «Այ մարդ, ո՞վ ես դու, և ո՞ր տեղիցն ես զալիս»: Նա պատասխան չը տուեց և էլի մօտեցաւ: Նոքա էլի հարցուցին. «Արդեօք խանդուղ խանումին չես ճանաչում, չես կարող այս մատանին նորան հասցնել»:

— Լաւ ճանաչում եմ, պատասխանեց Գաւիթը, բայց ես ոչ թէ ձեր մատանին տանելու եմ եկել, այլ ձեր գլխները պէտք է տանեմ նորան:

Գաւիթը տեսաւ, ի՞նչ հրէշներ տեսաւ, այդ Շքերդան

Խորաստիանի վերին ունքը այնքան էր կախուել, որ եկել հասել էր սրտի վերայ, ուստի և չանգալով տարել էր թիկունքի վերայ էր կապել. իսկ միւս հսկայի՝ Լօռայ շրմգայի՝ ներքեւի շուրթը գետինն էր աւելում:

Գաւիթն ու այդ երկու հրէշները իրար առան զուրգ ու վահանով և կռուեցին մի օր մինչև երեկոյ: Գաւիթը կանչեց. «Ես, հաւատամ խոստովանիմ ով բարձր Մարաթուկի սուրբ Նշան, Յիսուս որդի, զու օգնական», և զարկելով երկուսի գլիններն ևս կտրեց, իւրեանց մազերով մէկմէկուն կապեց և խուրճինի նման ձիու գաւակին ձգեց. իսկ նոցա կախ ընկած լեզուները գետինը վարում էին, կարծես զութանը ակօսներ է քաշել:

Այդպէս զլուսնները բերելով, ճանապարհի կէսն եկաւ: Տեսաւ, որ զիմացի կողմից մի ձիաւոր է գալիս երկնքի և գետնի մէջ կրակ թափելով, և ձայն տուեց Գաւթին. «Է՛յ, քանի զեւ ժամանակ ունիս, պատրաստուիր: մտքիդ չանցնես, թէ այժմ Շրբբդա Խորաստիան, Լօռայ շրմգայ հսկաների պէսին ես պատահել»: Ասաց և անցաւ Գաւթի թիկնակողմն ու մի զուրգ զարկեց: Գաւթը ճարպիկութեամբ ծռուեցաւ, մի ոտքը հանեց ասպանդակից. զուրգը զիպաւ ձիու ասպանդակին, առաւ տարաւ գետին:

Գաւիթը մէկ անգամ էլ շիտկեցաւ թամբի վերայ, ասաց, «Ես հացն ու զինի, Տէր կենդանի»: Գուրգը տարաւ, որ գլխին տայ, բայց զիմացի կռուողը կուչ եկաւ և ծամերը թափեց նորա առաջ:

Գաւիթը տեսաւ և ճանաչեց որ Խանդուզ խանումն էր, որ մարդի պէս փոխուած գուրս էր եկել նորա դէմ:

Գաւիթն ասաց. «Ա՛յ չար անգամ», սիրտս ստում է, որ մի զուրգ զարկեմ, քեզ գետնի տակ տանեմ. այս երկրորդ անգամն է, որ ինձ խոյտառակում ես»:

Բայց Գաւիթն այն Գաւիթն էր, Խանդուզն էլ իւր սիրած խանումն էր: Մէկ մէկի առան և դարձան եկան Խանդուզի քաղաքը. կանչեցին Խանդուզի հօրը, և Գաւիթն ասաց. «Գո աղջիկը չե՞ս տալ ինձ»:

Հայրն ասաց. «Թէ կ'առնես և կը մնաս այստեղ, կը տամ իսկ թէ պիտի առնես գնաս, չեմ տալ»:

— Կ'առնեմ, կը մնամ այս տեղ և չեմ տանիլ, ասաց Գաւիթը:

Այս խօսքը երբ որ առան՝ բերեցին տուեցին, նոցա պսակն արեցին ու եօթն օր եօթը զիշեր հարսանիք կատարեցին:

Ը.

Հարսանիքից մի ժամանակ որ անցաւ, Աստուած նոցա մի տղայ տուեց:

Գաւիթը տանը չէր: Երբ որ նորան իմաց արին՝ այնպէս ուրախացաւ, որ չէր էլ ուզում հաւատալ, թէ այդպէս բախտաւորուել է: Եկաւ և Խանդուզ խանումին ասաց. «Թէ որ այդ տղան իմն է, նորա վերայ մի նշան, մի գօրութիւն պիտի լինի»: Ասաց և զնաց մինչև որ պատասխան տանեն նորան:

Բերեցին տղային խանձարուր զրեցին և կապերի փոխանակ զութանի շղթայով փաթաթեցին տղայի վերայ: Երբ որ տղան լաց եղաւ և ձգձգուեցաւ օրօրոցի մէջ, նորա վերայի շղթան կտոր կտոր եղաւ: Պատասխան զնաց Գաւթին՝ թէ տղան լաւ տղայ է, շղթան կտրտեց. միայն մի ձեռքը արատաւոր է, խուփ արած է, և ոչ ոք չի կարողանում բանալ նորա ձեռքը:

Եկաւ Գաւիթը, նստեց և մանկան ձեռքը այնքան մաժեց, մինչև որ բացեց. տեսաւ որ ձեռքի մէջ արեան նիշ կար,

ասաց. «Հայ) Հայ) աշխարհքը մի կաթիլ արիւն է արեւլ դրեւլ իւր ձեռքի մէջ. եթէ դա ողջ մնայ, զարմանալի բաներ պիտի դուրս գայ դորանից»:

Բերեցին կնքեցին և անունը դրեցին Մհեր:

Անցաւ մի ժամանակ, տղան մեծացաւ: Գաւիթը թողեց տղային կաղզուան իւր պապի և մեծի մօտ, իսկ ինքը խանդուղ խանութին առաւ, ճանապարհ ընկաւ, որ տանի Սասուն իւր աղզականներին ցոյց տայ, և այն տեղէլ հարսանիքը տօնէ:

Բայց ճանապարհին շատ թշնամի աղզեր կային, նոցա հետ պէտք է կռուէին: Այսպէս օրինակ խաթիքը զօրք ժողովեցին ու պարիսպ կապեցին Գաւթի դէմ և սայլերով մազարիս (պատուար) շինեցին, կռիւ սկսեցին: Բայց միայն Գաւթը չէր նոցա դէմ, խանդուղ խանութն էլ մի տղայ մարդ էր կռվի մէջ: Խանդուղը մղբախի կոթով զարկում էր պարիսպը քանդում էր, և սայլերը ձգում էր երկու ժամ ճանապարհի հեռաւորութեամբ. իսկ Գաւթը կոտորում էր զօրքը և գնում էր առաջ:

Գաւթը դարձաւ ասաց. «Խաթիքը, դուք ի՞նչ անպատկառ մարդ էք, որ մի հարսի դէմ էք կռվում: Թէ պատիւ կայ ձեր մէջ՝ թողէք հարսս տանեմ Սասուն, յետոյ դամ և կռուենք»:

Նորա թէև ամաչեցան, բայց չը հաւատացին: «Որ այդպէս է, ասացին, ուրեմն երգուիր քո ծոցի Սուրբ Նշանով, որ հաւատանք»: Գաւթն էլ ձեռքը տարաւ, որ իւր խելքով սանդրի վերայ պիտի դնէր ու երգուէր, բայց ձեռքը ղիպաւ Սուրբ Նշանին: Իւր Սուրբ Նշանի հնարն ու զօրութիւնն էլ այն էր. որ նորանով երբէք չը պէտք է երգուել էր:

Խաթիքը ճանապարհ տուին, Գաւթն առաւ խանդուղին ու տարաւ Սասնոյ բերդը:

Ձեռքը տարաւ ծոցը և տեսաւ, որ Սուրբ Նշանն էր ընկել այն կողմ, որի վերայ ինքը երդուել էր, և ասաց. «Այսուհետև իմ բանը աջուկ չէ, թէ գնամ՝ զուր է, և թէ չգնամ՝ դարձեալ զուր է: Բայց որ երդուել եմ, պիտի գնամ»:

Վեր կացաւ եկաւ կռիւ անելու: Կռիւն սկսեց, բայց խաթիքը նորան նեղը լծեցին, նորա ձին խրուեցաւ մի շամբի տղմերի մէջ. հազիւ հազ այդ տղմից ազատուելով եկաւ ջրի մէջ լուացուելու, որ ցեխից մաքրուի:

Այդ ջրի ափի փշերի մէջ մի չար աղջիկ էր կենում, որ ամէն լողացողի վերայ նետ էր արձակում և սպանում: Երբ որ Գաւթն էլ միամիտ լողանում էր, աղջիկը դարանամուտ եղած մի նետ զարկեց նորա թիկունքին: Գաւթն զգաց, որ այս զարկը մահաբեր է, կանգնեց զոռաց, ձայնը հասաւ Սասուն:

Գաւթի ձայնը լսելով Սասնոյ մէջ մէկ տեղ ժողովեցան Զէնով Ովանը, Խոր Գուսանը, քեռի Թորոսը, ճնճղափոքրիկը, Յանվէզին: Զէնով Ովանը Սասնից կանչեց. «Գաւթ, մենք գալիս ենք»: Եւ շտապով եկան Գաւթի օգնութեան, որ արդէն ջրի մէջ լսել էր իւր եղօր ձայնը: Նոքա հասան ջրի մօտ և գտան Գաւթին:

«Զէնով Ովան, ասաց Գաւթը, ինձ վերաւորողը մեր գոռալու ձայնն առնելով, անշուշտ երկիւղեց կիսակենդան ընկած կը լինի. գնացէք նորան ղիտէք, նորա դատաստանն էլ առնեմ, այնպէս մեռնեմ»:

Փնտռեցին գտան, որ մէկ չինի աչքեր աղջիկ է: Գաւթը դորա ոտը ոտի վերայ դրեց, քաշեց ճըւտեց: Երբ որ այդ հրէշ աղջիկն էլ չկար, մարդիկ եկան այդ կողմերը գիւղ շինեցին,

անունը դրին ձրւտիս ձրւտին էլ յետոյ դառաւ ձապիկս, և այդ զիւղը այդ անունով մինչև այս օր կայ:

Գաւիթն իւր սպանողին սարսնեց, բայց ինքն էլ մահ հուան էր մօտենում: Եղբայրներն ու քեռին առան Գաւիթին զնացին Սասուն. չորս օրից յետոյ Գաւիթը մեռաւ:

Եղբայրները մեծ աղմուկով վերջապէս իւրեանց մէջ վճռեցին, թէ Խանդուղին որքան հարսնէմաս տան իւրեանց կալուածքները, և զնացին նորան սիրովերու ու ողջութիւն ասացին: Իսկ Խանուճը անմխիթար ասաց. «Հէյ... Գաւիթից յետոյ՝ ես սոցա ձեռքին պէտք է նայեմ և սոցա առակը պէտք է լինիմ»:

Եղբայրներն եկան մէկ մէկ ասացին.
Խանդուղ խանում, քո սև սուգը մի հագնիր,
Գաւիթ մեռաւ, ես փոխարէն. ողջ եղիր:

Խանդուղը երբ որ այս լսեց, ասաց. «Գնացէք դուրս իմ պատասխան այն տեղեց դուք կը լսէք»: Նոքա դուրս գնացին, իջան ներքև, իսկ ինքը վեր ելաւ բերդի գլուխը, և այն տեղեց մագերը փետերով գետինը գլորեց իրան: — Նորա գլուխը դիպաւ մի քարի և ծակեց նորան. այդ քարի մէջ լցնում են Սասնոյ կէս չափ կորեկ և ծեծում են, սանդի տեղ. Խանդուղի եօթնաձիւղ ծամի տեղը դեռ մինչև այս օր երկում է, և այժմ էլ այդ սանդը այն տեղ է բերդի առաջ:

Թ.

Հաւաքուեցան Գաւիթի եղբարքը Խանուճի վերայ, ձեռ տուեցին ծծերին, տեսան որ կաթ կար, քսո որում երեխայ կար:

Ժողովեցան միասին և ասացին, «Գուցէ ինչ որ եղել է, այն տեղ է եղել», և զնացին հասան կաղզուան և տեղի նրա

տողին ասացին. «Մեր եղբօր ու հարսի այս տեղ երեխայ կայ, ուր է»:

— **Ոչինչ չկայ**, նոքա պատասխանեցին:

«**Մեզ նշան կայ**, ասացին Գաւիթի եղբարքը, մեր հարսի ծծերում կաթ կար»:

— **Մի աղջիկ է** եղել նորանից և մեռել է, պատասխանեցին միւսները: Բայց սուտ էին ասում. իւրեանք գետնի տակ կին մի այր էին փորել, Մհերին դրել էին այդ այրի մէջ, և նորա վերայ պահապան:

«**Մեր մեռելներին էլ** նշան կայ, ասացին Գաւիթի եղբայրները, մեր մի տարեկանը մեր կէս հասակն ունի, իսկ երկու տարեկանը երկու, և այլն»: Եւ զնալով գերեզմանները նայեցին և տեսան, որ իւրեանց նշանով գերեզման չկայ:

Չէնով Ովանն ասաց. «Կաշններ բերէք, ինձ փաթաթեցէք, զոռամ, որ մեր տղէն իմանայ»:

*

Չէնով Ովանին փաթաթեցին կաշով, և նա զոռաց: Մհերը նորա ձայնը ճանաչեց և կամենում էր դուրս գալ, բայց նորա պահապանն ասաց. «Սյր ձեր ազգի ձայնը չէ, այլ երեխայք թմբուկ են զարկում»: Բայց Մհերն երբ որ երեք անգամ ձայնը հասկացաւ, զոները կոտրուեց և դուրս եկաւ: Գուռը դռան կոտրեց, առաջին դռանը աքացի զարկելով՝ նա զնաց դիպաւ երկրորդ դռան, երկրորդն երրորդին, և այսպէս եօթը դռներն էլ ջարդեց, դուրս ելաւ:

Տեսաւ, որ իւր հօրեղբայրներն այդ տեղ են, հայրն այդ տեղ չէ: Հարցրեց նոցա, և իմացաւ, որ Խաթիցի սպանել են նորան: Վաց եղաւ և երեսի վերայ գետնին ընկաւ: Հօրեղբայրները Թափուեցան վերան, և ինչ որ արեցին՝ չկարողացան բարձրացնել: Մհերի արասուքը գետինը ողողեց և զնաց:

Երեք օրից յետոյ հազիւ ուղղուեցաւ Մհերը: Հեծաւ

Տօր քուռակը և գնաց խլաթ, քարուքանդ արեց: Քանի որ այսպէս աւերում էր, բարձրանում էր Նեմրուծի զլուխը և եթէ այն տեղից տեսնում էր, որ մի երգիկից դեռ էին ծուխէ քարձրանում, միւս անգամ դառնում էր, ջնջում էր: Ամենից վերջը տեսաւ, որ մի պառաւ էր մնացել, նորան էլ շինայեց, ասելով. «Թէև հոգուս մեղք եմ անում, բայց իմ Տօր սպանողի ծուխն ու մուխը պէտք է կտրեմ» և կտրեց:

Այդ տեղ հրաժեշտ առաւ հօրեղբայրներին, նոքա դարձան իւրեանց տեղը. իսկ ինքը գնաց Տօսպայ բլուրը և ասում են, որ մինչև այժմ էլ այն տեղ է. և մինչև այժմ նորա ձին տեսնում են, որի վերայ նստած պատրաստ կայ, որ դայ և աշխարհքը չար լծից ազատէ:

Ժ.

Համբարձման գիշերը Մհերի այրի դուռը բացվում է, և հրաման չկայ, որ նա դուրս գայ, գետինը նորան չի վերցնի, ոտքերը կը մխուրն գետնին:

Մի օր Համբարձման գիշերը մի նախորդ տեսնում է, որ Մհերի դուռը բացվում է. նախորդը մտնում է ներս. Մհերը դորանից հարցնում է. «Դուք ինչպէս էք ուտում աշխարհքը»:

Նա էլ պատասխանեց. «Խելքով»:

— Հէյ, հէյ, մէկ էլ ասաց Մհերը, մեր ժամանակ լաւ էր. Մենք ուժով էինք վայելում աշխարհքի բարութիւնը:

Հիմայ նախորդը հարցրեց. «Մհեր, դու երբ պէտք է դուրս գաս այդ տեղից»:

Նա էլ սորան. «Երբ որ ցորենը լինի աւլորի չափ, և գարին մատուրի չափ, և ամենայն բան իմ ուժի չափին հասնի, այն ժամանակ միայն հրամանք կայ, որ այս վիճակից դուրս գանք»:

Դեռ մինչև այժմ աշխարհքը Մհերից բաժանուած է մի դռնով:

ՏՈՂՄԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

Բաղդադի Խալեֆայ Գերի աղջիկ
(կռապաշտ) (խաչապաշտ)

Կպուտկողի 2. Մուտլի Աբամէլէք Սանասար
Թագաւոր Թագաւորի կին

1. աղջիկ

1. Մլամէլէք
2. Յանվէզի, Ձէնով Ովան, Խոր- Կաղզուանի Թագաւոր
գուսան, ճնճղափոքրիկ, Դաւիթ Խանդուզ

Մհեր

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

Սենեքերիմ՝ Գրիստոսի ծնունդից շատ առաջ էր, կռապաշտ էր. այն ժամանակ շայերն էլ կռապաշտ էին, Սկարապետը չկար:

Բաղդադի Խալեֆները՝ Գրիստոսի ծնունդից յետոյ, ոչ թէ կռապաշտ, այլ մահմեդականներ էին:

ՄԱՍԻՔԻ ՏՄԱՄԱՀՈՅ

Քիջրա ժիզի	լաճիկատ զրաքրա
(աշապապա)	(աշապապ)

Պարտա	ցիկա	ճար	ճար	ճար

Քիջրա . 1

ճար	ճար	ճար	ճար

Քիջրա

ՄԱՍԻՔԻ ՏՄԱՄԱՀՈՅ

Քիջրա ժիզի լաճիկատ զրաքրա
 (աշապապա) (աշապապ)

16] սիճոյակի զո ասի մի ասիստատան և ասիստատան ընդ ասի
 լաջի իր ցիկա 17] և ասի 18] և ասի 19] և ասի 20] և ասի 21] և ասի 22] և ասի 23] և ասի 24] և ասի 25] և ասի 26] և ասի 27] և ասի 28] և ասի 29] և ասի 30] և ասի 31] և ասի 32] և ասի 33] և ասի 34] և ասի 35] և ասի 36] և ասի 37] և ասի 38] և ասի 39] և ասի 40] և ասի 41] և ասի 42] և ասի 43] և ասի 44] և ասի 45] և ասի 46] և ասի 47] և ասի 48] և ասի 49] և ասի 50] և ասի 51] և ասի 52] և ասի 53] և ասի 54] և ասի 55] և ասի 56] և ասի 57] և ասի 58] և ասի 59] և ասի 60] և ասի 61] և ասի 62] և ասի 63] և ասի 64] և ասի 65] և ասի 66] և ասի 67] և ասի 68] և ասի 69] և ասի 70] և ասի 71] և ասի 72] և ասի 73] և ասի 74] և ասի 75] և ասի 76] և ասի 77] և ասի 78] և ասի 79] և ասի 80] և ասի 81] և ասի 82] և ասի 83] և ասի 84] և ասի 85] և ասի 86] և ասի 87] և ասի 88] և ասի 89] և ասի 90] և ասի 91] և ասի 92] և ասի 93] և ասի 94] և ասի 95] և ասի 96] և ասի 97] և ասի 98] և ասի 99] և ասի 100]

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Ք

Սուրբ Կարապետ

Շատ Հայեր եօթը շաբաթ պաս են պահում և եօթը տարի շարունակ այդ կրկնում են, որպէս զև Սուրբ Կարապետը իւրեանց խնդրածը, իւրեանց մուրազը, կատարէ: Սեր աշուղները շատ երգեր ունին շինած, և մեր ժողովրդի մէջ էլ շատ աւանդութիւններ են պատմում: Ս. Կարապետի մասին: Ահա մի քանի կտոր այդ երգերից և աւանդութիւններից.

- Սուրբ Կարապետ կանգնեց յուսով,
- Գեա Յորդանան լցուեց լուսով,
- Բրիտոս քո գիրկ մկրտեցին
- Մկրտարող Սուրբ Կարապետ:
- Դու աղա ես, դու վեղիր ես,
- Ամէն սրբոց գլխաւոր ես,
- Մարիամ Կուսին դու քաւոր ես,
- Մարուր քաւոր Ս. Կարապետ:

Սուրբ Կարապետ գլխատեցին, զո միամեա զէր բայ
 Ղայսար քաղքէն որ հանեցին, իրտու իմաք և ի
 Մարմին զաթրին որ բարձեցին, ման ճարկեց զո
 Մշու սարի մէջ թաղեցին: ման ճարի իմաստաբայ: Ս

Սուրբ Կարապետի գերեզմանի վերայ Լուսաւորիչը մի եկեղեցի կանգնեցրեց, որ Հայերի մեծ ուխտատեղի է: — Ուխտաւորը

հեռուից տեսնում է անտառախիտ մի լեռ, որ կարծես թէ մի մեծ գլուխ է մագերով. դա է «Մշու ծամը», որի վերայ եկեղեցին է շինած:

Չորս բոլոր մեծ դաշտ է,

Չորս բոլորը շայու ցեղ է,

Բարձր գմբեթը անոյշ տեղ է:

Երբ որ «Մշու ծամը», թուխ ամպեր կանգնած, դու մանով է ծածկվում՝ Ս. կարապետը դիւան է անում: ամէնի դարդին դարման ու դեղ է անում:

Ս. կարապետը բարձր է բոլոր,

ձամիէք ունի ոլոր մոլոր,

Կ'երթայ կու գայ շատ ուխտաւոր,

Թէ ձիաւոր, թէ ոտաւոր:

Մուրադ կու տայ ոտաւորին,

Ջուղաբ կու տայ ձիաւորին:

Խցեր ունի անթիւ անդար,

Միշտ անպակաս մէջը հիւրեր:

Իննաղբիւրն է անմահական,

Տակի ջաղացք խիտ հրաշական:

Փուռն ու օջախ Ս. կարապտի,

Միահատիկ սաղ աշխարհքի:

Ս. կարապետը բոլոր դեւերին յաղթեց և ծառայ շինեց: Կաղ դեւը ամենայն օր վառուած կրակների միխիրը շալակում է և գետնի տակով տանում, հեռու. թափում է այն տեղ, ուր որ փրէբաթման անունով մեծ բլուր է ձևացել: Այդ կաղն է Ս. կարապետի փոշեհան, մինչև ֆրիստոս գայ դառապտան:

Ահիսարհ Ժողվան, եկան քո տես,

Լոյս կը փայլէր քո սուրբ երես:

Ամէն աղքատ մարդու տէր ես,

Դարդի դարման Ս. կարապետ:

Ծառայ կ'ըլնեմ քո շնորհքին

Շնորհք տուող ամէն աշղին,

Մուրադատու Ս. կարապետ:

Երգ շինականաց *)

Լուսնակն անուշ, հոյն անուշ,

Շինականի բունն անուշ.

Ծագեց լուսնակն երկրնուց,

Հովուի փոյն էր անուշ.

Հօտաղն եզներ կ'արածայ,

Մանձկալ պառկեր, քունն անուշ,

Ջրղզղուն քամին կը վրչէ,

Ծովային հոյն էր անուշ.

Դաշտեր ձորեր մընջեր են,

Ջրեր զլզլան՝ ձէնն անուշ.

Հաւքեր թառան ուրենց բուն,

Բըլբուլի տաղն էր անուշ.

Անմահական հոտ բուրէր,

Քաֆուր վարդի հոտն անուշ:

*) Այս երգը արտատպում ենք «Նշանապետական և հայրենի աշխարհքից», որով մի անգամ ընդ միշտ յայտնում ենք, թէ այն տեղ շատ կան այնպիսի դիւրմբունելի յօդուածներ, որոնք կարող են երկրորդ տարեջրմանում և կարգացուիլ, եթէ ուսուցիչը այդ հարկաւոր համարէ և չբաւականանայ այս տեղ մատուցած նւթի քանակութեամբ:

Նաւակոծեալը Վանայ ծովու մէջ:

Նաւով Աղթամարայ ելանք
 Դէպ Աւանուց ճամբարհն ընկանք:
 Ոստանայ դէմ երբ մենք հասանք,
 Սև օրուայ սև արև տեսանք:
 Թուխ ամպեր երկինք պատեցին,
 Աստղ լուսնակ մէկ տեղ կորսուցին,
 Պինդ պինդ քամիներ փչեցին,
 Ափ ցամաք աչքէս խլեցին:
 Գոռաց երկինք, գոռաց զետին,
 Խռովեցաւ ջուր կապուտ ծովին,
 Չորս կողմից կրակտեց երկին,
 Սև սարսափ իջաւ իմ սրտին:
 Երկինք կայ՝ գետին չերևայ,
 Գետին կայ՝ երկինք չերևայ,
 Սարի պէս դնդղներ կու գայ,
 Խոր անդունդ առջևս կը բանայ:
 Ծով, դու թէ Աստուած կը սիրես,
 Խեղճ անձարիս զուժ մի անես,
 Ինձ քաղցր արևէս չհանես,
 Քարէսիրտ մահին չմատնես:
 Աման ծովեր, ահեղ ծովեր,
 Ինձ մի՛ տանիք պաղի հովեր:
 Ձեզ կ'աղաչեն իմ արտառներ,
 Ու սրտիս հազար բլուր ցուեր:
 Ծով գազանն իսկի ողորմ՝ չունի,
 Պղծած սրտիս ձէնիկ չլսի:
 Արիւն երակներս կը պաղի,

Սև գիշեր աչքերս կ'իջնի:
 Գնացէք ասէք իմ՝ ճնողին,
 Թող նստի լայ իր սև որդին,
 Թէ Հանէս կուր եղաւ ծովին,
 Թռաւ գրնաց արև կտրըճին:
 Ես իմ սրտովս իմանալու չեմ
 Ես իմ սրտովս իմանալու չեմ

Օրհորդի սև օրը:

Էս օր աստղըդ թռաւ կորաւ,
 Լուս արևդ խաւարեցաւ:
 Մեծ իշխանն քեզ սուելէ
 Թաթար խանին՝ հետըն տանէ:
 Այն իմ գրկիս, վայ քեզ Շուշան,
 Գերի գնացիր Թաթարստան:
 Լոյս հաւաղողդ պէտք է մոռնաս,
 Մահամետի կրօնքին դառնաս:
 Խեղճ իկ, էս էր քո արժանին,
 Որ դու ընիս կին Թաթարին:
 Միայն մի դու պէտք էիր ընիլ աիկին,
 Տիկնանց աիկին մեծ իշխանին:
 Ես ոչ էսպէս անօրինին
 Ձեռը կապած ընիս գերին:
 Ես իմ խաբարն տարի եմ ես ձեր գրան,
 Զերը պապերդ են իմ կրօնս
 Ծնած սրնած, իշխան եղած,
 Էսպէս մին ցաւ ես չեմ տեսած:
 Ականջդ բաց լռես խրատիս,
 Մըտիդ պահես էս պառաւիս:

Ուր որ գրնաս, ինչ տեղ ընիս, մ
 Հաստատ մրնաս լուս հաւատիս: Գլխամբ
 Չմոռանաս Հայոց ազգիս, վաս ըսգ
 Միշտ հանապազ նրբան օգնիս: Գ
 Ամենայն ժամ միտքըդ ձրգես, առգ
 Հայրենեացդ պիտանի լիս:
 Ե՛հ, Տէր ընդ քեզ, գրնաս բարև,
 Քրիստոս պահէ քո լոյս արև:

Տաղ վասն դարիբուժեան:

Վայրի հաւիկ մի եմ, բռնած ու բերած գրած զես ի նեղ
 զնդան
 Չուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ
 երամ:
 Սրտաբեկեալ եմ, միջակոտոր, ճար չունիմ, զե՛նչ լինիմ
 գերիս:
 Եթէ զբուժուլն ու տատրակ բերեն ինձ երգասաց զուսան,
 չուրախանամ:
 Եթէ հազար գոյնզգոյն փետուրներ ինձ բերեն խալաթ
 տան, չուրախանամ:
 Եթէ զշաքարն ի մազածու բերեն կերակուր ինձ տան,
 չուրախանամ:
 Եթէ հազար թախթի հուքմն ինձ տան ու հարիւր հա
 զարի տէր առնեն, չուրախանամ:
 Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն, անհամար հեծել
 ձիաւոր, չուրախանամ:
 Եթէ զարպաս ինձ շինեն, ոսկւով զարդարած, անզին
 մարդարտով, չուրախանամ:

Իսկ եթէ հնար ճարակ լինէր ինձ կընէ ի նեղ զնդանէս,
 Եթէ լինէր որ թուչէի բարձրանայի, տեսնէի զիմ երամս,
 Խաղալով, ճախրելով ու կանչելով խառնել յիմ երամս,
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս,
 Յայնժամ խառնէի յընկերացս երամ:

Տաղ վասն մահուան

Քանի՞ դատիս ի հեռ մեղաց,
 Է անզգամ մարդ կատաղած,
 Զայնչափ չարիք որ գործեցիր,
 Հերիք արա, դարձիր մեղաց:
 Ի յՆդամայ մինչև այս օր
 շունչ կենդանի գերծ չը մնաց,
 Գիտեմ չը լսես խրատու գրոց,
 մեղաւորաց թ' ինչ կայ պահած:
 Ով որ ունի բերդ ու քաղաք,
 դարպաս ունի ոսկւով ծեփած,
 Յետոյ եթող զամէն անտէր,
 ներքև հողուն է նա պառկած:
 Ով որ խմէր զանոյշ գինին
 զինքն բտէր քան զխոզ ուռած,
 Տեսայ զնա խիստ ասեղի,
 չանուշահոտ գէշ մի ձգած,
 Ով որ հեծնուր ձի բարձրավիզ,
 մաղաջ
 ու թուր քաշէր ամէն գեհաց,
 Տեսի զնա խիստ փոշիման,
 երկու փայտի մջ էր պառկած:

Ե՛ն Յովհաննէս Թուղութեանցի,
 սրտի մտօք զականջդ բաց,
 Աստէն արն՝ քեզ ճար շուտով,
 անդէն առնուց պրսակ փառաց:

Հայոց աշխարհիկ:

Ա.

Հայոց աշխարհիկ, զարունդ է հասել,
 Ահա գեղեցիկ զարուն քո եկել.
 Ո՛վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
 Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք:
 Ահա զարունիկդ եկել է եկել
 Աւագ Մասեաց ծայրն՝ ընդ քեզ հաշտ հայել.
 Այն սև սև ամպերն են դարձել ի փախ,
 Այն ճերմակ ճերմակ սարերն են անփախ.
 Զընիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
 Քաղցրիկ կրօնը զյորէ գետս հազար.
 Յայն բարձր ժայռից, որ երկնուց են մօտ,
 Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ:
 Ահա քո բլուրներն, Հայոց աշխարհիկ,
 Այն քո բլուր բլուրներ ու բլուր վտակիկը,
 Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
 Տարան ցուրտ ձրվեռդ ու ձիւներդ շատ.
 Լերինք ու հովիտք ընդարձակ ու լայն
 Նախշուն զարդարին նոր հարսին նման.
 Կապուտակ սարերդ գոյնզգոյն պրսակ

Կապեն ի գլուխ զենչ նոր Թագուորակ.
 Ի ծայրից սարից, որ երկնուց են մօտ,
 Քուռի մինչ ի խորն հօրտան ու մօրտա.
 Գետեզերքն ամէն բացել են շուշան
 Պայծառ դրնդրղնով ցընդղկեն զընան,
 Սարեզերքն ամէն զվարդն երեցուցին,
 Ա՛հ կարմրուկ վարդեր, զաւակք Եղեմին:

Պըլպուրն ի հեռուանց Թողեց ճրգնարան
 Ծովեր ցամքըներ Թեւեց անդուման,
 Կանչեց ի յօգուն երեք հետ բարև,
 Ոտկունքն դըրաւ ի սարին վերև,
 Սարին վերևէն ի վարդին տերև,
 Հայոց աշխարհիկ, քեզ երես բարև:
 Սարեկն ի սարին եկաց ու մինաց,
 Անմեղ նախընձով եղաւ երգատաց,
 Արագիկն յերդիս մաքրեց իր բունիկ,
 Կանգնեցաւ կրղաց «Հայոց աշխարհիկ»:
 Արտուտիկն Թըռաւ, Թռաւ Թռաւ վարուվեր
 Մանրիկ ճըլըլով ասաց շատ բաներ:
 Տատրակիկն իջաւ, իջաւ ցած ու ցած
 Կրթկունքն ի գետին բզկն վն ձրւաց:
 Հովիւն ու հօտաղ, գառինք եղն ու կով
 Գօհացան զԱստուած՝ մարգեր շուրջ գալով:
 Հանց քեզ Տէրն է տուել զարուն գեղեցիկ,
 Որ դրախտի նմանիս, Հայոց աշխարհիկ,
 Դրախտիկն անցեալ քեզ դարձեալ գայ զարնամբ,
 Զինչ պայծառ արևն, որ ծածկէր ի յամպ:

Բայց Նահապետիս քննչ անեմ ծերունի,
 Որ եմ քան զամեն ծաղիկ վազանցուկ,
 Իմ գարունս անցել ու հասել աշունս
 Յամբած տերևուկս ըսպանեմ հովուն,
 Թէ երբ ի լերանց ծոցուն փչէ խոր,
 Չրգէ անկրկիծ զես ի մահուն ձոր:
 Նահապետիս կեանքն եղաւ բաւական
 Խրնդութեամբ կեցաւ ի յիւրն Հայաստան,
 Ժամ է, որ երթայ ի յայն հայրենիք,
 Ուր իսկի չը գատուին եղբարք սիրելիք.
 Խրնդութեամբ կ'երթամ քեզնից, Հայաստան,
 Քեզնից առած հողս՝ ի քեզ տամ թաղման:
 Ի քո ծոցէդ վեր կանգնեցաւ Աղամ,
 Ես ի քո ծոցէդ տ'ենեմ անթառամ:
 Այ մանկտիք, եկէք շուրջ Նահապետիս,
 Ականջ դիք շայիր հօրդ յետքի ձայնիս:
 Պպուշն ու սարեկն երգերն են նորել,
 Իմն՝ հետ տատրակին հողու հաւսարել:
 Մանկտիք, զես Հայոց հողն ու ջուր անուցել,
 Ես այն հողն ու ջուր սրբաով եմ սիրել:
 Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,
 Քանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ:
 Հայաստանի օղն է քաղցր ու բարակ,
 Հովերն են անուշ, պայծառ վռտակք.
 Ջուրն ու պրտուղն համ տան անմահութեան,
 Խոտն ոսկեզօծէ զգառներուն բերան.

Յոսկիթել ամպոց յայգուն զովադին
 Թորթոր իջանէ ցօղիկ մանրագին,
 Կարմիր ճամանջով արևուն շաղուած՝
 Գայ ի խաւրճիլ մանանայ կենաց:
 Ո՛հ լերուք ծաղկած, ո՛հ ջուրք ծիծաղկոտ,
 Չանուշիկ հովերդ ի յիս ածէք մօտ.
 Հողմունք անուշիկք եկէք մօտ ի յիս,
 Շունչ ու երգս առէք, տարէք ի Մասիս.
 Տարէք վերջն շունչս ի տուն տապանին
 Ու լեցուցէք զաւկաց թորգովին:
 Ձեզ կ'սսեմ, մանկունք, սիրունք, նազելիք,
 Որոնց է բնական Հայոց աշխարհիկ.
 Մ'ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն,
 Ծառն՝ արմատով ծառ, տունն հիմամբ է տուն:
 Մեր Տէր ի յերկնուց ծայրէն երբ իջաւ,
 Երկրիս հիման քարն յԱյրարատ դրաւ.
 Այն մեր Մասիսու երկնաձև սարէն
 Աչից ըզըտըր՝ վերացաւ նորէն.
 Հոն չափեց սահման իւր նախաստեղծին,
 Ձեկիրատն ու զնրասիս բաժակ դրաւ: զրախտին.
 Կենաց փայտի ծառն ի հոն ծաղկեցաւ,
 Չար զիաութենէ բարին մեզ տրուաւ.
 Ի Հայոց հողէն կազմեցաւ Աղամ,
 Չօղն Հայոց Յւան ծրծեց քաղցրահամ.
 Աչքերն պայծառ, երեսքն աննըման
 Հրեշտակաց առջևն հոն հանդիսացան.

Մաղկունքս այս ծընած են ի յայն ծաղկոց,
 Որ Եւայի պսակ եղան ու նըստոց.
 Այս մեր սարերու ծերուկ արձագանք
 Աստուծոյ ձայնին տըռւին պատասխանք.
 Ատից երգք սիրոյ ու ապաշխարութեան
 Երկինք ի վեր նախ յերկրէս վերացան.
 Արեամբն Աբելի Քրիստոս հոս զենաւ
 Կըրկին և կըրկին մեզ յոյս խոստացաւ.
 Ազամ ծերունին այս սարիս ներքեւ
 Զաւակացն ասաց զեւր յեաին բարև.
 Այն ձորիկն ի վայր լալով գնաց Եւս,
 Գլուխն ի քար դըրաւ կարօտ Եղեմայ.
 Ի հոն են նընջել մարդիկն առաջին,
 Որ հետ հրեշտակաց զԱստուած օրհնեցին...:

Երբ գոաց երկինք ու գետին սարսեց,
 Ամպերն ի ծով, ծովն ի յամպեր վազեց,
 Այն սարին ծայրէն նոյ մտաւ ի տապան
 Զրագունդ երկրիս շուրջն եկաւ մանուաման.
 Իջաւ բազմեցաւ ի բարձրն Մասիս,
 Զաղու աղանին դըրկեց աւետիս,
 Երկիրս էր դարտակ, անապատ ահեղ,
 Լոկ ի Հայաստան կայր մարդկութեան տեղ:
 Մենք ենք հարազատք ծեր նոյի ծընունդք,
 Որ ժառանգեցինք զհովիտս ու լեռուք:

Պ.

Նախանձեցաւ Բէլ բըռնաւոր արքայն,
 Զհասանն անձոռնի կանդնեց բարձր ու լայն.
 Շատ զօրքեր շարան բերաւ անհամար,

Թուխ արև բըռնեց մեր երկնուց պայծառ.
 Լքսեց Հայկն արի, ձէնեց քաջերուն,
 Սարն ի վար վաղեց զինչ կայծակ յամպուն.
 Զաղեղն լարեց կամբըն նըման,
 Որոտաց թըռուց ըզնետն գերան,
 Զերկաթն ու պղինձ կըրծեց հըսկային
 Սըրտովն ու թոքով հանեց կրանկին:
 Փլաւ Բէլն ի բըլբէն ի խոր Գերեզման,
 Զէտ ծուխ սև զօրքերն եզան ջիրուցան:
 Շատ կըտըրձուորայք հանեց Հայաստան,
 Շատ Բէլեր վլուցին քաջքն Հայկի նըման.
 Հոռոմն, Ատրին, Մար, Սըրիւթ, Պարսիկ
 Հայոց թըրերուն եզան պատառիկ.
 Այս սարեր, ձորեր ու դաշտերս ամէն
 Կարմիր են քրտնել, կարմիր խըմել են.
 Ի հոն են խաղցել Տիգրան ու Տրդատ,
 Վարդանն ու Վահան, Աշոտ ու Սըրբատ:
 Հոն կրակէ թըռուցել նետ Հայոց մանկտին,
 Թըզե պէս թափել գունդ գունդ թըշնամին.
 Այս բլուրներուն ծայր գրօշակներ բացուել,
 Առիւծն ու արծիւ հետ խաչին փայլել:
 Զէնք ծարուած զացել, դարձել են արբած,
 Ճըմռոտած ճակատք պարզել են պսակած.
 Ընկել են ընկել հոն Հայոց ալ քաջք
 Մէկ ձեռքն նիզակ ու մէկայն խաչ.
 Թըռել ի դաշտէն ելեր են յերկին
 Բազմել հետ Գրիգոր, Տրդատ, Վարդանին:

... անձնաց բաժնից գնն բնակող միայն սխալ
... անողմնաց բնակող միայն բնակող
... անողմնաց բնակող միայն բնակող

ն.

Աբգար թագաւոր մեր քաջ իմաստուն
Թրդթով է խօսեր հետ Աստուածորդւոյն,
Երնէկ և ընծայ առել քրիստոսէն,
Գեսպան ընդունել զառաքեալն թաղէն,
Չառաջին պատկերն այն սուրբ դաստառակ
Փրկչին կողաբաց Գեղարդն միակ,
Այլ շատ նըշխարքներ, մատուցը զանազան
Ի ծոցն է պահել աշխարհս Հայաստան,
Շատ առաքեալներ ունի իւր քարոզ,
Շատ սուրբ հայրապետ ու շատ մարտիրոս,
Բիւրաւոր ունի մատրուցը ու տաճար,
Անապատ ու վանք հազար ու հազար,
ՅԱստուծոյ առեր ըզլեզուն ու զգիր,
Թարգմաններ յամէն ազգէ գիրք ընտիր,
Ճարպիկ տղայք զերկել ի Ստամբուլ, յԱթէնք,
Հայն հրում լեզուով յաղթել է գէշիւնք,
Շատ գրքունք գրեր մեր հարքն ու մագղաթ
Չեա ցորեն դիզել քանց բարձր Արարտ:

գ.

Բայց ափսոս հիսիկ — որ չար թըշնամիք
Իսկի չեն խնայել Հայոց աշխարհիկ,
Եկեղեցիք, վանք, գրքատուն, դարպաս
Չարկել են թըրով հըրով դաս ու դաս,
Չազգն ընչօք տեղօք քանդել ու գերել,

Դէմ չորս հովերուն տըւել ու ցըրուել:
Աւանդ քեզ, աւաղ, Հայոց աշխարհիկ,
Տուն երկնանըման, փրլած տաղաբիկ...:

Այլ ինչ ափսոսամ ըզքեզ, Հայաստան,
Երբ ձեռքն Աստուծոյ տեսնուամ յանդիման.
Ինքն է հրամայած քակել, ինք շինէ,
Ձինչ ըզհետ ճըմռան զարուն քեզ բերէ.
Չաշխարհ մեր սիրեաց Աստուած ի սկզբան,
Թէ անէծք երես՝ սիրոյ էր և այն:
Ի թուխ ամպերէն ելնէ փոթորիկ,
Ըզհող համբուրեն ծառերն ու մայրիք,
Տերեքն և ողկոյղքն մարդարտաշար
Ի յոսից ներքե երթան ի խաւար.
Ամնն և փոթորիկ վաղիւ վերանայ,
Նոր արև, զարուն, ծառն ու այգին դայ:
Արմատք հին՝ նոր ճիւղ, հին ճիւղք՝ նոր ծաղիկ
Ընծայեն բնութեան, Հայոց աշխարհիկ.
Դուք այլ կործանած սիւնք, դուք այլ կանգնիք,
Եսպին կամարք, սհ, սուրբ եկեղեցիք,
Քակեալ վանօրէք՝ շինիք հոգւոյ տուն,
Գառնան ձեր սաղմոսք, ձեր քաղցր ալիւն:

ե.

Այդ քո աւերակք, Հայոց աշխարհիկ,
Նըշան մեծութեանդ են, թոռմած ծաղիկ.
Թոռմած ես՝ բայց վարդ, ցամբած՝ բայց հալուէ.
Ով ըզքեզ օտար ծաղկան հետ փոխէ՝
Նա կոյր է անմիտ. զհոսն անմահութեան

Ընդ սուտ գոյն փոխէ տրխմարն ու տղայն.
 Անմիտ է անմիտ, որ ըզպարծանքն հարանց
 երթայ վաճառէ ընդ օտար ազանց.
 Աշխարհիս օրէնք՝ որ ծնողք չը փոխուին,
 Հայրենափոխք չեն, ուրացողք լինին:
 Ծառն՝ արմատով ծառ, ծառովն է արմատ.
 Դարար մանկութիք, ձեր տակն է Արարատ...:
 Պինդ կացէք, Աստուած ցօղէ ի վերէն,
 Ծրլեք ու ծաղկիք քանց վարդ ի թրփէն.
 Զրլնի ոք նախանձ, չըլնի հակառակ,
 Թէ չէ՝ նման խոտու լինի խայտառակ,
 Այլք ծրլն ծաղկին. թէպէտ քրչիկ մ'ուշ,
 Զարկամն մրնայ միշտ դրժնիկ, միշտ փուշ.
 Որք մաքուր սիրով կան զինչ աղբըսիկք՝
 Տեսնեն քո գարունդ, Հայոց աշխարհիկ:

Ս. Ս. Ես, Նահապետ, ցամբած ծերունիս՝
 երթամ մեր հին հարցըն տամ աւետիս,
 Ասեմ, թէ գարուն եկաւ տանտ Հայոց.
 Դուք Նահապետիս ասացէք՝ հոգւոց:
 Ծեր Նահապետիդ՝ տուր կակուղ հողիկ,
 Որ գրեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ:

Բաղդադ:

Կար ժամանակ, երբ որ Արարները աշխարհքի կէսը
 ախրել էին, և այն ժամանակ նորա մեծ ազգ էին: Մահմեդա-
 կանութիւնը նորա տարածեցին: Դոցա ամէնահոգակաւոր քա-
 ղաքներէն մէկն էր Բաղդադը, որ Տիգրիս գետի վրայ է շինած:

Մանաւանդ Խալիֆ Հարուն ալ Ռաշիդի ժամանակ այդ քա-
 ղաքը շատ պայծառացաւ, հարստացաւ, և այն ժամանակուայ
 ամենամեծ ուսումն ու գիտութիւնը այդ տեղ էր: Նա այժմ էլ
 կայ, բայց հին շքեղ քաղաքից մնացել է միայն մի քանի մի-
 նարէներ, պարիսպ, աշտարակներ և դռներ: Երևելի են նորա
 միջի արմաւենիներն ու պարտէզները: Տները դասից անշուք են,
 բայց ներսից բաղկացած են մի քանի գաւիթներից, իւրաքան-
 չիւր գաւիթը պատշգամբներով և բնակարաններով: Ունի լաւ
 բաղար և արևելեան ապրանքների մեծ առուուոր: Բաղդադի
 ուղտերը և մանաւանդ կայտառ սպիտակ էշերը՝ ամենայն տեղ
 գոված են:

Որքան որ մեծ էր երբեմն այդ քաղաքի և միջի նստած
 խալիֆաների համբաւը, ինքը քաղաքն էլ մեծամեծ պատու-
 հասներ կրեց: Երկու անգամ ամենասարսափելի ժանտախտ մտել
 է դորա մէջ՝ օրէնը 4000 մարդ զոհ առնելով: Մարախի բուն
 հայրենիքը դա է: Շատ անգամ զարհուրելի սով է եղել. մի
 անգամ էլ Տիգրիս այնպէս սաստիկ վարարուեցաւ, որ մէկ զի-
 շերում 7000 տուն և 15,000 մարդ կուլ տուեց: Եւ այսպէս
 մի անգամ գոռոզ Բաղդադը հասարակ քաղաքների շարքումն
 է անցել:

Քաղաքն այժմ տաճիկների ձեռին է, ինչպէս և Մուշն
 ու Ս. Կարապետը:

(Բաղդադի խալիֆաները միշտ մահմեդական են եղել, և
 ոչ թէ կապաշտ. իսկ Սենեքերիմ, ասորեստանեայց թա-
 գաւորը, իրօք կապաշտ էր, բայց նորա ժամանակ Բաղդադը
 չը կար):

Սենեքերիմ և նորա որդիք

Մեր հին պատմութիւններում գրած է, թէ Քրիստոսից
 հազարաւոր տարի առաջ, երբ ոչ Ս. Կարապետ կար և Հայերն

էլ դեռ քրիստոնեայ չէին՝ կար Ասորոց թագաւորութիւն: Ասորոց Սենքերիմ արքայն իւր Ադրամէլէք և Սանասար որդոց ուղում էր կուռքին զո՛հ մատուցանել, սորա էլ իւրեանց հօրը զո՛հեցին, և փակչելով եկան Հայաստան՝ մեր Սկայորդի թագաւորի ժամանակ: Նոցանից ծագեցաւ Հայոց երևելի նախարարութեանց մէկը՝ այն է Արծրունեաց նախարարութիւնը, որ Հայաստանի կառավարիչներից շատ պատիւ ստացան, և իւրեանք ու իւրեանց սերունդն էլ շատ ծառայութիւն և քաջութիւն արեցին: Նոքա բնակեցան Վանայ ծովի հարաւային ափերում, և Սասնոյ գաւառի շինութիւնն ու սկզբնաւորութիւնը դոցա ձեռքով կատարուեցաւ:

Գուռզուռայ Աստղիկի լոգարան

Եփրատը երբ որ Մշոյ դաշտը մտնում է և Կինձա ու ճապաղջրի սարերի ու ձորերի քարերին է դիպում՝ մի նեղ կրօնով շատ սեղմուելով գո՛ւռ գո՛ւռ ձայն է արձակում, այդ տեղը կոչվում է Գուռզուռայ, ուր հին Հայերի դիցուհի Աստղիկի լոգարանն է եղել: Այդ դիցուհին գիշերները սովորութիւն է ունեցել լուացուելու: Շատ երիտասարդներ, բարձր սարերի վերայ մեծ կրակ էին վառում, որ նորա լուսով Աստղիկի չքնաղ գեղեցկութիւնը տեսնէին: Գիցուհին երիտասարդների յանդգնութեան չհամբերելով՝ մշուշով պատեց չորս կողմը, ուր դաշտի մէկ ծայրից սկսած մինչև միւս ծայրը, թէ ամառ և թէ ձմեռ մինչև սարերի գլուխը այնպէս բռնվում է, որ անհնարին է լինում որ և իցէ կողմի լեռներից տեսնուիլ: Ահա այս թանձր և շարունակ մշուշեց այդ դաշտը կոչվում է Մշոյ դաշտ:

Մշու սարեր մշուշ է, իւր հողն ու ջուրն անոյշ է:

Մշոյ աշխարհ կամ Տարօն:

Մշոյ աշխարհի ժողովուրդը միշտ նշանաւոր է եղել իւր քաջութեամբ և ազատասիրութեամբ: Արծնասիրութիւնն էլ այս տեղի Հայոց սեպհական ձիրք էր. քանի որ ժողովուրդը կռապաշտ էր՝ քուրմերը մեծ պատերազմ են տուել Տրդատին և լուսաւորչին, և երբ որ ճշմարիտ անսուածապաշտ դատաւ այն ժամանակ էլ Վարդանի և իւր նմանների առաջնորդութեամբ սաստիկ կուռել է Պարսից մոգակրօնութեան դէմ:

Մամիկոնեանց մեծ նախարարութիւնն էր այս աշխարհքի տերը:

Մշոյ Հայերը պէտք է քաջ լինէին, որովհետև իւրեանց հայրենիքը զարմանալի դիրք ունի: Այն ամեհի բարձրաբերձ լեռները, որով նոքա պատած էին, սրտին էլ համարձակութիւն պէտք է ազդէր. անտառներով մացառներով զարդարած գազաթներն ու ծոցերը, նոյնպէս և շամբերը, որոնց մէջ գազանները լինն են, ստիպում էին իւրեանց, որ զէնքի վարժուեն թէ որսալու և թէ պաշտպանուելու համար: Այս ընդարձակ դաշտը և այն մեծատարած երկինքը վեհութիւն և վեհմութիւն ազդում էին նոցա հոգուն, և այն պատուական կլիմայն արդէն զօրաւոր և յաղթանդամ կազմում էր նոցա մարմինը:

Չուրերը բոլորն էլ գետեր են, որ չորս կողմի լեռներից սուր ընթացքով և գոռուն գոռուն ձայնով վազում թափվում են Եփրատի ծոցը. և թէպէտ Մեղրագետն ու Եփրատը անձայն են ընթանում, բայց անցնում են այնպէս արագ, այնպէս ահարկու և լայնածաւալ պոյսաներով ու հոսանքներով, որ կարծես մի ահեղ թագաւոր է Եփրատը և նորա սարապետն

է Մեղրագետը, որոնք ջրային զօրքերի մի մեծ բանակ հետն առած՝ գաւառները տիրելով գնում են կռուելու ուրիշ տիրապետողների հետ: Այսպիսի մի երկիր՝ որքան որ իւր բնակիչներին ոյժ է տուել, այնքան էլ օտարների նախանձն է շարժել, և այս պատճառով Մշեցիք գրեթէ շարունակ կռուի մէջ ծնած և մեծացած լինելով՝ մահից չվախեցող մարդիկ էին:

Մշոյ աշխարհ լեքն է եղել բանաստեղծներով, երգասացներով, բազմաթիւ աշուղների տեղ է եղել այս երկիրը. որովհետեւ այնքան քաջերի և քաջազործութիւնների համբաւը բերանէ բերան աւանդվում էր և նոցա յիշատակը ամենի սրտում կենդանի էր:

Այսքան գեղեցիկ է Մշոյ աշխարհը, որ տեսնողի սիրտը թրթրում է, արիւնը եռում է և հոգին բարձրանում է:

Բայց այս օր այս նշանները ազգային չեն. Մշոյ քաջերը Հայեր չեն, այլ ֆրդեր են, և երգերն ու խաղերն էլ քրդերէն լեզուով են: Շատ ֆրդին որ հարցնես իւր ծագումը, կ'ասի. «Մենք Հայ ենք եղել, և մեր ազատութեան համար զէնքը չձգեցինք, հաւատքը փոխեցինք»:

Մշոյ դաշտի մէկ կողմը Սասնոյ քաջաբեր լեռներն են, Տօրոսի շղթան: Միւս կողմը Բղնունեաց (Վանայ) ծովը ծիծաղախիտ ծածանում է: Մէկ կողմն էլ՝ Բիւրախեան (Բինգեօլի) լեռնք և նոցա գօտիներն են, անմահացուցիչ ջրերով և ծաղկներով զարդարուած:

Դաշտի մէջ եփրատէսը խշալով խոխոջալով Գրգուռից ցած հոսում է մէկ կողմ: Իւր խոր ծոցի մէջ անթիւ ձկներ կայտուում և խաղում են. բազն ու սագը իւր ալեքների վերայ ծփում են. իւր գետափուկները լեքն են խոշոր և մանրիկ թռչուններով:

Արագիւր ամէն զիւղի տներու երդիկը և բարձր շէնքերի, պարիսպների և ծառերի գլուխը իւր բոցն է գրել, և հազարաւոր ճնճղուկները նոցա բոցների բոլորը ապաւինել են: Դաշտի խոտերի մէջ բուսած և ձորերի մէջ ծաղկած վարդի թփերի մէջ սոխակները ճրլբլում են, դարնան, ամառուայ և աշնան առաւօտները՝ այնպէս սքանչելի տեսարան և ըսարան են կազմում այս թռչնոց երամը, որ ասես թէ բնութեան տաճարի մէջ Արարչի փառաբանիչ են կարգուած սոքա հրեշտակների տեղ:

Արևելեան կողմից Գրգուռ լեռը կոթողաձև անկուած է երևում, որի ստորոտը տարածուած է մէկ կողմը Մշոյ դաշտը, միւս կողմը Վանայ ծովը: Առաւօտեան արեգակը երբ որ նոր ծագում է և իւր ճառագայթները խփում է ծովի ալեքների և դաշտի գոյրչիների վերայ՝ մի կանաչ կարմիր մանեկաձև պսակ է ձգում այս Գրգուռի կլորակ և մերկ գլխի վերայ: Նորան նայողը զմայլում է:

Գրգուռի թիկունքից բարձր բարձրանում է Նէմրուժ կամ Նեբրովթ լեռը, որի գլուխը նման է մի բոլորակ սեղանի, մէջ տեղը հրաբուխի մարմուքն է, իսկ շուրջը պսակաձև շարուած բարեհամ աղբիւրներ և անուշահոտ ծաղիկներ: Այս Նեբրովթ լեռը իւր ճակատից կախած ունի Բէլայ դիակը «ի տեսիլ կանանց և որդւոց» և ի նշան յաղթանակի մեր Հայկին, առաջին Հայուն առաջին յաղթողին ազատութեան թշնամուցն:

Մշոյ դաշտի միւս կողմի լեռների վերայ բարձրացած են գմբէթայարկ վանքերը՝ Ս. Առաքելոց վանք, Ս. Յովհաննու վանք և Ս. Կարապետին, որոնց ամպամած և արևով ոսկեզօծուած կաթուղիկների խաչերը ամէն կողմից հովանի են ափռում դաշտի հարիւրաւոր գիւղերի վերայ նայելով, և ամէնի սիրտը քաշում են իւրեանց մօտ:

Յասման Խաչ:

Սովորութիւն կայ Հայոց մէջ, որ կամ առհասարակ գեղացիք միանալով, կամ մի իշխան միայն իւր քսակով ծախս են անում և մի խաչաքար են կանգնեցնում: օժիւ են տալիս մեծ հանդիսով այդ քարի վերայ քանդակուած խաչը և իւրեանց զիւզի պահպանութեան համար թողնում են: Մեծ հացիկերոյթ են կազմում, եզներ են մորթում, հարիսայ կամ մատաղի միս են եփում, անխաիր բոլոր հասարակութեան ուտեցնում են: Այս բարեպաշտական սովորութիւնը մինչև այսօր էլ պահուած կայ Հայոց մէջ: Իսկ Յասման Խաչ անուն տալու պատճառն էլ այն է, որ երբ տարածամ ձիւն կամ կարկուտ տեղայ, բերքերին վնասէ. երբ մարտին ու թրթուրը բոյնն ու կանաչը դօսացնեն. երբ երաշտութիւն լինի. երբ ցաւ ու մահ պատահին մարդկանց և անասուններին. երբ երկրաշարժ լինի. և ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդկանց ձեռքով արած չէ, Աստուծոյ ցասումն է համարվում: Եւ այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի Խաչի պատկերը այսպէս բարձրացնում են երկնքի առաջ, որ պատուհասիչ հրեշտակը պատկառէ Խաչից, իսկ Աստուած հաշտուի: Եւ հաց ու մատաղ հասարակութեան բաշխելով, մարդիկ իւրեանց սրտի ներողութիւնը միմեանց և զթածութիւն են գործ դնում, որպէս զի Աստուած իւրեանց յանցանքները ներէ, զթած երկնաւոր Հայրը յետ առնէ իւր ցասումը:

Բինդէօլ:

Սա այն բարձր և աննման լեռան է, որ մեծ և փոքր Հայաստանի կեդրոնում կամ սրտի վերայ է բուսել: Սորա գա-

գաթն ելնողը վայելումէ անասական օդ, ջրա ջինջ է երևում իւր երկնքի եթերը, և քիչ էլ խոնարհեցնելով աչքերը՝ տեսնում է շայաստանի ամէն կողմերը, ողջունում է Մասիսները և Արագածը: Այս տեղ Անիի գմբէթների և բերդերի բեկորների վերայ վայոյ բուերի արձագանքն ու սոյլը բերում է դարնան սիւքը, և խառնում է Բինդէօլի տխակների և հովուաց սրինգների ձայների հետ: Այսպէս անասական ծովը, Միջագետքի սկիզբը, կարինը Բինդէօլից սրատեսներին երևում է, որ ամենայն կողմ իւրեանից ջուր է տալիս:

Բինդէօլը դժնդակ տարտարոս է ձմեռուայ եղանակին, և դրախտ դարնան և ամառուայ ժամանակ: Բինդէօլը վեհ և ահաւոր չէ, այլ սիրուն. թաղաւորին չի նմանում, այլ թագուհւոյն. շնորհաց լեռան է քան թէ քաջերի և դիւցազունների. սորա համար իւր վերայ եղած վէպերը ոչ Ազնաւուրի, ոչ Դևերի, ոչ յաղթողի և ոչ զինուորի ու թագաւորի են, այլ սիրոյ, զուարճութեան, առողջութեան, գեղեցկութեան և զարդի, անուշութեան, պարարտութեան, գուսանութեան: Որովհետև սորա բիւրաղբերաց և հազար ականց բոլորը ծաղիկների և բոյսերի բիւր տեսակն է փռուած. ջրաբքի մարգեր, ամենազալար բանջարներ և խոտեր իւրեանց արմատներով, ուտելու, բուժելու, զոյն զոյն ներկելու են գործ ածում: Նորա վայրի կենդանիները՝ առիւծ և վագր չեն, այլ եղնիկ և այծեամն:

Այս տեղ զբօսասէրները ուրախանալու են գալիս, հիւանդները օդ և ջուրը ծծելով կեանքը նորոգելու: Իսկ մեղունների տղոցն ու բզբոցը հիանալի ներդաշնակ են տալիս մարդիկների և թռչունների երգերին, անասունների բառաչին, գորտերի կառաչին, զլլալացող առուակի և սուլացող սիւքի ձայնին: Անթիւ անհամար են մեղուններ. բայց միւսնոյն ժամանակ օձերն էլ սողոսկում են այդ ծաղիկների կողակով, նոքա էլ

միևնոյն ծաղիկներէյ հիւթ են առնում և վայելում են սուրբ օղբ: Այստեղ մեղուներով մեղը է շինուում, և օձերով թոյն:

Գոփելի է այս լեռան բարեվայելչութիւնները, որ արաւրածներին հրաւիրում է այն տեղ տեսնել վայելել Աստուծոյ սքանչելիքը:

Եւ որովհետեւ այն տեղի աղբիւրն ու ծաղիկը մէկ չէ, հազար է, ուստի և դժուար է լինում ճանաչել, թէ մարդ որ ծաղիկը որ աղբիւրի մօտ է տեսել: Եւ երբ որ մի հովաւի վերայ բարկացել են, թէ ինչո՞ւ միտ չէ պահել իւրեան առողջ ջացնող ծաղիկն ու ակն, հովիւը պատասխանել է.

«Բիւնգ է օլ, հեզար գէ օլ, ազ չի՞ զանըմ քիժան գէ օլ:»

Բիւր ակն, հազար ակն, ես ի՞նչ գիտեմ որ այն ակն:

Եւ այս է եղել իբր թէ տեղի անուանակոչութեան սկիզբը:

Աւելորդապաշտութիւններ:

Բարեպաշտական սովորութիւնները շատ անգամ աւելորդապաշտական և դիւթական բաներ են դառնում: Ահա մի քանի օրինակ այն Հայերի կեանքից, որոնք քրդերն են խօսում և քրդաբար են ապրում:

Նոցա քահանաները մուրացկանութեամբն են ապրում: Հասարակ կարգալ չգիտեն, տգէտ են, բայց շատերը կախարչութիւն են անում:

Այդ Հայերը մեռելի վերայ սաստիկ ողբ և կոտորում են անում: Եթէ մեռնողը անդրանիկ գաւակ է, յուղարկաւորութեան ժամին մի ձի են զարդարում, մեռնողի հագուստը ձիու

վերայ են դնում, նորա սուրբ, վահանը, հրացանը ձիու վերայ են կախում: Մեռնողի Հայ, Քիւրդ և Նղիղի բարեկամները ժողովում են. դիւղին մօտենալու ժամանակ սև փաթաթոյններով դուլնները սքողում են և մեծ ձայնով բռնում են. «Այլըմըն բրայօ, վայլըմըն բրայօ», ստէպ կրկնելով այս վայերգը:

Յուղարկութեան հանդէսը սկսվում է բոլոր զիւղացւոց բազմութեամբ. և դազաղի առաջևից իբր քսան կանայք անոյշ ձայնել, սևեր փաթաթած դիւնները, քիւրդերէն լեզուով ողբեր են կարգում. քսանից աւելի էլ տղայ մարդիկ սև ապաներ քաշած, դիւնները սգաւոր՝ ողբասաց կանանց ետևից են դնում. երբեմն երբեմն կանանց ողբերի ձայնը ընդհատվում է, այդ ժամանակ սգաւոր մարդիկ միաձայն աղաղակում են. «Այլըմըն բրայօ, վայլըմըն բրայօ»:

Թաղումից յետոյ եօթն օր այս հանդիսով գնում են գերեզման գալիս են: Բլ որ ննջեցեալին շատ է սիրում, շատ է գոռում:

Մի անգամ անձրև չեկաւ, դաշտը չորանում էր. ասացին, թէ հարուստները կախարչութեամբ կապել են երկինքը, որ իւրեանց ամբարած ցորենը թանկ թանկ ծախեն: Ուստի որքան ժողովրդական կախարչներ կային, աշխատեցին, որ ամպերի կապանքն արձակեն, որը քարի վերայ մի բան գրեց ջրի մէջ ձգեց՝ որը մեռելի գանգ գերեզմանից հանեց գետը ձգեց՝ որը իշու գլուխը ջրով լուաց. և ինչ որ արին, անձրև չեկաւ: Մէկ դիւղի կանայք սպառազինաձ գնացին միւս դիւղի սպառազին կանանց դէմ, երկու կողմից հրացաններ պարպեցին, վերջապէս մէկ կողմը յաջողեցաւ մի ոչխար խնել միւսից, բերեց զոհեց, դուլիւր կտրեց և մեծ հանդիսով տարաւ գետը ձգեց, որ անձրև գայ: Հրէաների գանգեր հանեցին գերեզման

նից ջուրը ձգեցին, ուզում էին որջ քահանայի զլուխը կտրել ջրին նուիրել, բայց անձրև եկաւ և կենդանի զոհն ազատուեցաւ:

Գիւղեց մի տղայ անյայտացաւ: Ճնողները շատ ի զուր որոնելով՝ զիմեցին կախարդներին: Նոքա պատասխանեցին, թէ տղային ջինները յափշտակել են, զազանների հովիւ են շինել: Մէկ որսորդ էլ վկայում է, թէ ինքը սարի վերայ մի զազան տեսաւ և ուզում էր հրացանով նորան սպանել, բայց փոխուեցաւ, մարդու պէս երևեցաւ աչքին. հրացանը վեր դրեց, այն մարդը դարձեալ զազան դառաւ. նորից ուզեց սպանել, մարդ դառաւ, վերջապէս հարցրեց. «Դու ո՞վ ես. ասաց. «Ես յաչօն եմ». և աներևոյթ եղաւ:

Թագուցած գանձեր:

Հայաստանի ամէն գաւառի բնակիչները այն կարծիքն ունին, թէ շատ տեղերում գանձեր կան պահած. ուր որ մի բլրակ, աւերակ, այր, խոռոչ տեսնես՝ նորա վերայ կըսկսեն պատմութիւն անել, թէ գանձ կայ, բայց թողի ս մը պէտք է գիտենալ, որ գտնուի:

Թորլիամը անուշադիր թողնելով, որ ազիտութեան կամ խաբէութեան մի խօսք և հնարք է, բայց որովհետև ամենայն տեղ տարածուած է գանձի մասին կարծիք, ուրեմն անհնարին բան չը պէտք է համարել, թէ մեր նախնիքը իւրեանց ոսկին ու արծաթը, դրամն ու ակունքը, զարդերն ու թանկ նիւթերը նշանով մի տեղ, կամ իւրեանց տան հիմքի տակը, կամ գերեզմանների մէջ խոր պահում էին, և այս բանի մասին մեր պատմագիրներն էլ շատ վկայութիւններ են աւանդել

Ուզ. շատ աշխարհակալներ այդ գիտենալով՝ մեր նախնիներին ստիպում էին, որ իւրեանց թաքուցած գանձը հանեն բերին: Մեր թագաւորների շերիմները քանդում էին, ոսկորները հանում էին, որ նոցա հետ գանձ էլ հանեն: Մինչև այսօր էլ Հայերը ուր որ մի նշանաւոր շերիմ և մի դամբան գիտեն՝ կարծում են թէ գանձ կայ նորա մէջ կամ նորա կից: Այս սովորութիւնը ծագել է կամ բարբարոսների և յափշտակողների երկիւղից, կամ զուցէ և ազահուսթիւնից: Մինչև այսօր էլ շատ տեղ պատահապէս փորելով՝ անակնկալ կերպով գտնում են հին դրամներ, զարդեր, զէնքեր, գործիքներ: Մինչև այսօր էլ կան մարդիկ, որ այդ սովորութիւնն ունին. կայ մարդ՝ որ իւր տան պատի մէջ է դնում իւր գանձը և քարով ու աղիւսով շարում է՝ կայ՝ որ սենեկի կամ բակի յատակի աղիւսի կամ ոսկի ներքև փորում է և խոր պահում է:

Ազնաւորի գերեզման:

Միփանայ տակը ֆրդի մի գիւղ կայ, որին տիրում է մի շէխ, այսինքն ֆրդերի գլուխ և մարգարէ: Այս շէխի տան առջև ութը քայլ մեծութեամբ մի գերեզման կայ, որ մի քարակոյտով բարձրացած է: Անց ու դարձ անողները և մերձաբնակ Հայերը այդ գերեզմանին անուանում են Ազնաւորի գերեզման. իսկ շէխը անում է՝ թէ նորա նախնիքն է, որին և իրօք մեծարում է իբրև մի մարգարէի շերիմ: Այդ հօկայ գերեզմանը և իւր ազնաւոր անունը, որ է ազնաւոր, աղանիւ բառը, համարվում է իւր սոհմային գլուխ, իւր ազգի տանուտէր, և ուրեմն մեծ նշանակութիւն ունի: — Բայց արդեօք ո՞վ կարող է հաստատել, թէ ֆրդերը Հայերից չեն խել այդ գերեզմանի յիշատակը, ինչպէս և շատ բան նոցանից

յափշտակել են. գիտենալու բան է, որ այդ գերեզմանը Հարթի մէջ ջնէ, մեր Հայկ հաստատութի բնիկ դաւառի մէջ, ինչու որ բնին Հայկի գերեզմանը չէ դաւ կամ վերջապէս մի ուրիշ. Հայ հաստատութի գերեզման: Այսպիսի մեծադիր և Ազնաւոր անուծով գերեզմաններ շատ կան տեղ տեղ յիւր ու ցան եղած, որոնք նոյնպէս Հայոց նշանաւոր Հարանց հոգեւորի, կամ նախաբարները շերիմը պէտք է լինին: Իսկ շերիմի տիրելուն բնաւ զարմանալու բան չը կայ: զորքա կամ հայրթիւնից դարձել են կամ անհայ գանձով՝ այդ տեղերը եկել են, տիրել են և օճախ են շինել:

Ժողովրդեան բերանով անուարին դե և էլ են ասում: Գեր միշտ գիւցագն, հսկայ, ախան է: Եթէ ուղեկան մէկ յաղթող և հսկայ մարդու վերայ խօսել, դե բառ են գործածում: Եւ միշտ այսպէս է հասկացում, թէ դե երբ բնակում են լեռներում և այրերում, անոցս գբերում, անջուր հորերում և անջրդի անապատներում: Թէ նոցանից մէկը հազար մարդու կարող է յաղթել. թէ լեռների չափ քարեր կարող են վերցնել. թէ մարդու միս եփում ուտում են. թէ թագաւորի ազգիան զողանում են. և այլն:

Նէմրութ, Սիփան և Վանայ ծով:

Մշոյ դաշտի արևելեան հիւսիսը կայ մէկ լեռա Նէմրութ անուն, որի մէկ երեսը Մանագիւրտու կողմն է նայում, մէկ երեսը խաթն է Վանայ ծովի տիրին, և միւս երեսը Մշոյ դաշտն է. իւր թևի տակն ունի նաև մէկ փոքրիկ և իրանից բաժանած տանձաձև մի լեռու, սե և մերկ. այս փոքր լեռան է Գրգուռ:

Այդ լեռաների տանիքից Ռահվայ դաշտն է երկարում:

որի ձմեռը սաստիկ և ձիւները շատ են ամէն տարի և բուքը պոսիա չէ: Հանապարհորդները շատ անգամ մի քանի օր այդ տեղ փակուած արգել լինում են և աւազակների բաժին են դառնում, որոնց որջն է այդ տեղը:

Գաշտի մի եղբը մինչև ծովն ավր կրտսնես մի կարգ անկուածի կամ կանգնուածի պէս սե քարեր, որոնք հեռուից և մութը ժամանակ մարդուն կարող են խափել՝ իբր թէ կարաւան են զորքա կամ մարդ և ուղա: Տեղացիք Բէլի ուղտեր և ուղա ապաններ են անուանում նոցա և այս պատմութիւնն են անում: Առապաշա թագաւոր է եղել Բէլը և մեծ զօրքով կռիւ է եկել Հայոց թագաւորի ու երկրի վերայ. Հայոց թագաւորը Աստուծոյ ձեռքով սպանել է Բէլին և հանել է Նէմրութի զլուխը, որ ամէն կողմից երևելի լինի: Բէլի մարդիկ և ուղտերն էլ իւրեանց վախից քար են կորսեցել:

Սիփան մի լեռնադաշտի անուն է, որ Նէմրութի գօտին է, բարձրադիրք. և արևելեան կողմում երկարում է այն մեծ ու շատ բարձր սարի սաքի հետ կապուելու համար, որ Սիփանայ սար է կոչվում. որպէս թէ Նէմրութը լինէր Բէլը և Սիփանը մեր Հայկ, որ Բէլին իւր սաքի տակ կապել է: Խիստ անուանի է խոտաւեռ և օդաւէտ լինելով: Իւր առաջեւ է Վանայ ծովն երեսը, բնակութիւնները ընդհանրապէս ծառազարդ են, և բաւական զտախալայր յիւրք ունենալով՝ պատուական և առատ պաղպաղ ջրեր են հոսում: Բնակիչը վայելում է Վանայ ծովի անմահական օդը, նորա գեղածիժաղ երեսը, Վանայ բերդի և նորա այգեստանների, Արտամեաի ծառատանների, և ծովեզրի բոլոր միւս շէնքի և աւանների սքանչելի տեսարանը, ամենացանկալին Վարազը, Հայոց ձորը, Ռշտունիք, Շատախու և Մուկաց լեռաները, Նարեկայ վանքը, Աղթամարայ, Կտուց և Վիմ

անապատները կողմերը և սուրբ տաճարների երկնամասն գրմբէթները: Ծովն հարաւային կողմն էլ կարճ կանից անտառները, և ծովն երեսը լողացող առագաստաբաց նաւերը: Մի վայրկեան բարձրացիր այս Սիփանայ հովիտը, նաոիր, հանգրստացիր, չնչէ անմահական ծաղիկների և դալարիների մէջ, ուր մի վտակ է խոխոջում, ուր սոխակ է դայլայլում, ուր կռունկն է կռում, ուր ծովը առաջևդ ծփծփում է. մի քիչ երջանկացիր: Է՛, դէ բարձրացիր, սիրտ առ և իմացիր, որ այդ սեղը Քիւղի խոտնոցն է. այդ սեղը Հանանցի Քրչերի բնակութիւնն է:

Քիչ էլ առաջ դնա. ահա Սիփանայ սարը, այդ ահա զին բարձր, մասիակերպ սարը, որին Գոռոզ լեռն են անուանել: Բնակիչները մէկ բան են երգում այս լեռան մասին իբրև հին երգ, և ասում են.

— Նոյայ տապանն եկաւ ի Սիփան,

Ասաց.

«Սիփանն սու զիս, սու զիս»:

Սիփանն ասաց.

«Գրնա ի Մասիս, գրնա ի Մասիս»:

«Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»:

Եւ տապանը հեղեղի ջրի երեսին ալէճուր լինելով և դալով Սիփանին՝ Գրգուռի գլխով անցել է, և քսուելով կամ գրգուռելով այս լեռան սուր գլուխը տաշել է, և անցել է:

Վանի պառւանները մի վէպ ունին, թէ վանայ ծովն մէջ վեշապ է կենում: Վիշապը եթէ հազար տարեկան դառնայ, շատ սարսափելի կը մեծանայ. ուստի հրեշտակները երկնքից իջնում են, շղթայով կապում են և վեր են քաշում, այնքան

բարձրացնում են մինչև որ արեգակի առաջ են հանում, ուր կիզել հուրը վառում և մտիր է դարձնում վեշապին: Աւելացնում են, թէ մեծ շառաշեան ձայնը են լսում երկինք քաշած ժամանակ: Թէ երբեմն այնքան դալարում ոլոր մնոր է լինում, որ պոք կտրվում է և վեր է ընկնում: Գուցէ թաթառ հողմի նկարագիրն է այս, որ ծովեց ջուր ու ցամաքից փոշի, ծառ և քար է բարձրացնում ամպերի մէջ և վեր է թափում:

Ով որ վարագայ լեռան վերայ բարձրանայ, կը տեսնէ թէ ինչպէս արևը վերջնալուսի ժամանակ ծովն մէջ է մտնում լողալու: մաքրուելու և հանգստանալու համար՝ օրուայ ճանապարհորդութիւնն անելուց յետոյ: Այդ ժամանակ արևմուտքում սովորաբար երևում են շառագոյն, մոխրագոյն և ձիւնագոյն ծալ ծալ ամպեր՝ դոքա արեգակի անկողնի քօղն ու վարագոյրներն են: Նորա անկողինը ծովն տակն է ձգուած փրփուրի վերայ:

Վարագայ սարից երևում է նմանապէս արեւելքում արշալոյսից առաջ արևի ծագումը: Այդ ահագին լեռան տակից նախ դուրս են գալիս 12 դաւազներ, սե սե արարներ, և այդ լեռան վերայ լուսեղէն ճիւղոններով ճառագայթի պէս խփում են. լեռը ցածանում է, բոլոր սարերն իւրեանց գլուխը խոտարհեցնում են. արևը իւր երեսը լուանում է և ջուրի ցօղերով այդ ժամանակ սրսկվում են սարերն ու դաշտերը. այս ջրի սրսկումից բոլոր հաւքերը արթնում վեր են թռչում և ճլխում են. յանկարծ արևի ոսկի գլուխն ու հրեղէն բրչամն երևում է: Հրեշտակները վեր են քաղում արեգակի անկողինը, հանում և հազցնում են նորա հրեղէն հալաւները: — Արեգակը ջաղացի ջրտան ձախրի կամ դունտի ձեն ունի, որ գլու

բռնելով որոտովում է և առաջ է դնում, և այդ դնելի փառե-
 ընց լուսի ճառագայթներ են ցողանում, ինչպէս ջրի ցնցուղը
 ջաղացի գունդից: Երբեմն ստամանները բիւր բիւրոց ժողովում
 են և աշխատում են հակառակ կանգնել արեւին, որպէս զէ նորա
 լոյս երեսը մարդիկ չը տեսնեն. բայց հրեշտակները հրեղէն օրով
 պատերազմում են, խիռում են, դուրս են ձգում նոցա ան ամ-
 պերի միջից: Եւ այս կուռի ձայնն է ամպերից լսուած որոտումն.
 փայլակը՝ Գաբրիէլ հրեշտակի սուրն է, կայծակը՝ հրեղէն նետն
 է, և ծխածանը՝ աղեղն:

ՅԵ Ժննմազի լսամազոզայ լսողմի մասով լսարադան դո ՎՈ
 ոյ Եւոտմն յԵնն մի Մհերի դուռ: լսամազոզմի զմզա սխալմի
 աման լսարոց զանա՞ լսամասարմն՞ մ լոյժողգան լսար

Մհերի դուռ:

Վանայ բերդից քէպի արեւելք նայելով մի լեռնագօտի
 կայ, որի արեւելեան զլուխը անուանւում է Զըմփի զըմփի մա-
 ղարայ, արեւմտեան ծայրը՝ Ագրփի, և մէջ տեղը՝ Մհերի
 դուռ: Գոցա քիմացն են վանայ երեւելի Այդեստաննայքը:
 Զըմփիզըմփի մաղարան մի ընդարձակ քարայր է, ուր ձայն ար-
 ձակած ժամանակ զըմփի զըմփի արձագանք է տալիս: Ներսը
 այդ քարայրի ամենամուտն անկեան մէջ ձանապարհ կայ, որ
 տեղեց սաստիկ քամի է փչում: այդ լեռնափոր ուղին, ասում
 են, թէ մինչև վանայ բերդի մէջ է տանում: Ինքը Զըմփի զըմփի
 մաղարան էլ բերդաձև գազաթ ունի, և քանի որ փորել են,
 այնքան աւելի շէնքեր են գտել մէջը՝ զարմանալի շէնքեր կո-
 փածոյ քարից, լայն տանդուխներով, մէջը հողէ կարասներ,
 կժեր, արհեստական աթոռներ, պղնձէ թափծու արձանների
 երկաթէ նետեր, խոփեր, և այլն:

Մհերի դուռը բոլորովն մերկ քար է, որը որ մեծ ար-
 հեստով տաշել, կտկել են մեծ դրան ձևով, կամ աւելի ճիշդն
 ասել, մի տախտակի ձևով և սիրուն քառանկիւն շրջանակով,

վերան գրել են բեւազդիրներ՝ խիստ յստակ: Այդ գրերը շատ
 հին գրեր են, և պատմում են ամենահին բնիկ ժողովրդեան
 զլիւնն եկած անցքերը:

Մհերի դրան վերեւից սև ջուր կաթ կաթ ծորում է: Եւ
 ասում են. «Մհերն և իւր ձին Աստուծոյ հրամանով փակուել են
 այն տեղ: Այն սև ջուրը Մհերի ձիու քրտինքն է: Այդ դրան
 ներսը ճախրի Ֆալակն է պատում, այսինքն աշխարհքի
 մարդկանց կամ երկրագնտի ճախրը, անիւր: Մհերը շարունակ
 նորա վերայ նայում է. երբ որ այդ ճախրը զաղարի, այն օրը
 Մհերը կ'ազատուի, դուրս կու գայ և աշխարհքը կ'աւերի:»
 Եւ թէ՛ «Ամէն տարի Համբարձման զիշերը երկինք գետին իրար
 համբուրում են. և այդ ըոպէին Մհերի դուռը բացվում է: Ով
 որ արթուն է մնացել և այդ վայրկեանը տեսել է, ինչ որ
 սիրան ուզել է՝ այնպէս է եղել: Շատ մարդիկ միայն ոսկի են
 ուզել և այդ վայրկեանին մտել են դուրս բերելու, բայց ազահ
 լինելով, ուզեցել են շատ վերցնել և ուշացել են, դուռը փա-
 կուել է, նոքա մնացել են ներսը»:

Մեր պատմութիւնը ուրիշ տեսակ է պատմում: Եւ առ-
 հասարակ ժողովուրդը շատ տեսակ պատմութիւններ ունի
 Մհերի մասին:

